

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀՍՍՐԱՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (18)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. ПРАВОВЕДЕНИЕ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գևորգյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Կ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խարրինա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Ս., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ա. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran
Bernard (*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A.,
Ghazinyan G. S., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G.,
Haykyants A. M., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Kury Helmut
(*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev V. F. (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ 1990-1991 ԹԹ.

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Գորբաչովյան վերակառուցման անխուսափելի հետևանքը խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացն էր: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը:

Անկախության հռչակագրի ընդունումը հայոց պետականության զարգացման պատմության մեջ սկզբնավորեց նոր՝ Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը: Երկրի քաղաքական ղեկավարության առջև ծառանում էր կարևոր խնդիր՝ որոշել պետաիրավական համակարգի ռազմավարական զարգացման ուղղությունը: Անկախության հռչակագիրը ազդարարեց այդ ռազմավարության իրավական ամրագրումը և պաշտոնականացումը: Այն ամրագրում էր նաև այն հիմքերը, ռազմավարական խնդիրները, պատմաքաղաքական նախադրյալները, որոնք ընկած էին անկախության քաղաքական-իրավական գործընթացի հիմքում¹:

Հայաստանի համար առաջացավ իրավական բարեփոխումների ռազմավարության ընտրության հարցը՝ կա՛մ շարունակել նախորդ իրավական համակարգի էվոյուցիոն վերափոխումները, կա՛մ էլ կատարել դրա արմատական հեղափոխում: Երկրորդ ուղու ընտրության դեպքում առաջանում էր սահմանադրական-իրավական մարտավարության խնդիրը: Հայաստանի իրավական զարգացման ռազմավարության ընտրությունը կատարվեց որոշակի գործոնների և պայմանների

¹ Անկախության հռչակագիրը խորհրդային հանրապետությունների «ինքնիշխանության շքերթում» առաջինը չէր: Պատմական տարօրինակությունն այն է, որ կայսրության հիմքը կազմող ՌԽՖՍՀ-ն դեռևս 1990 թ. հունիսի 19-ին ընդունել էր «Հռչակագիր ՌԽՖՍՀ պետական ինքնիշխանության մասին», որում, ի տարբերություն Հայաստանի, միանգամից հայտարարվում էր Ռուսաստանի օրենքների գերակայությունը դաշնային օրենքների նկատմամբ (տե՛ս **Стещенко Л. А., Шамба Т. М.**, История государства и права России: Академический курс. В 2-х т., т. 2, XX в., М., 2003, էջ 404): Այսպիսով, ՌԽՖՍՀ-ն ոչ միայն ժամանակով, այլև արմատականությամբ առաջամարտիկ էր, ի տարբերություն Հայաստանի, որը որդեգրել էր ավելի զգույշ քաղաքականություն՝ պայմանավորված Ղարաբաղի հիմնահարցով:

րի ազդեցությամբ: Դրանցից էին՝ համաշխարհային մասշտաբով պետականության և իրավական համակարգերի՝ որպես սոցիալական ինստիտուտների վիճակը և զարգացման միտումները, Հայաստանի պետաիրավական զարգացման պատմական փորձը, խորհրդային պետական կառավարման և իրավական կարգավորման համակարգերի ճգնաժամը, դրանով պայմանավորված նոր աշխարհաքաղաքական վիճակը:

Ռազմավարության ընտրությունը կատարվեց 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով, որը, «հռչակելով անկախ պետականության հաստատման սկիզբը», խնդիր դրեց ստեղծել «ժողովրդավարական, իրավական հասարակարգ»: Այսպիսով, Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինը ծրագրային-իրավական բնույթի Հռչակագրով որպես ռազմավարական նպատակ սահմանեց «ժողովրդավարական և իրավական հասարակության» կառուցումը:

Այս ռազմավարությունը Հայաստանում չունեի պատմական նախադրյալներ: Ժողովրդավարության գաղափարը հայ իրականության մեջ առօրեական քաղաքականության առարկա դարձավ միայն հայոց պետականության վերածննդով՝ Առաջին հանրապետության հռչակմամբ: Սակայն դժվարին պայմաններում նոր-նոր ձևավորված ժողովրդավարական կարգերը և ինստիտուտները չունեցան իրենց բնականոն պատմական զարգացումը, որովհետև ընդհատվեցին բոլշևիկյան ամբողջատիրության և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմամբ: Կոմունիստական գաղափարախոսությունը մերժում էր համաշխարհային քաղաքակրթության ամենամեծ նվաճումներից մեկը՝ ժողովրդավարությունը, և դրա իրացման քաղաքակիրթ ձևերը, ինստիտուտներն ու ընթացակարգերը: Այսպիսով՝ նոր հռչակված հանրապետության համար սոցիալիստական պետաիրավական զարգացման փորձն անընդունելի էր, որովհետև այն կառուցված էր պետության և իրավունքի մարքսիստական-դասակարգային հայեցակարգի հիմնադրությունների վրա: Այս պայմաններում կարևորվում էր ընդօրինակման արժանի համաշխարհային փորձը:

XX դարի վերջերին աշխարհը հսկայական առաջընթաց է ապրել ժողովրդավարության գաղափարների կենսագործման, ժողովրդավարության ինստիտուտների կայացման ուղղությամբ: Համաշխարհային քաղաքական-իրավական մտքի վերլուծությունը վկայում է, որ նորագույն աշխարհում ժողովրդավարության մոդելի հիմնական հենասյուներն են մարդու իրավունքները (ազատությունը), քաղաքացիական հասարակությունը, սոցիալական-իրավական պետությունը:

Այս հայեցակարգում պետությունը և քաղաքացիական հասարակությունը միմյանց ժողովրդավարացման պայմաններ են: Պետական իշխանության ինստիտուտները միջոցներ են, որոնց օգնությամբ կեն-

սագործվում են իրավական օրենքները, հռչակվում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, սանձվում և իրավական շրջանակի մեջ են դրվում հասարակական հակամարտությունները, այսինքն՝ պետական իշխանությունը քաղաքացիական հասարակության գոյության ու գործունեության քաղաքական-իրավական երաշխավորն է: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունը իր խայտաբղետ կազմակերպություններով վերահսկում է քաղաքական-պետական «ներկայացուցիչներին», զսպում և հակակշռում է պետական իշխանությանը: Առանց անկախ, ինքնակարգավորվող, պլյուրալիստական քաղաքացիական հասարակության ժողովրդավարությունը, ազատությունը և հավասարությունը կվերածվեն դատարկ կարգախոսների, իսկ առանց պետության հուսալի պաշտպանության, վերաբաշխման ու հակամարտությունների լուծման գործառույթների քաղաքացիական հասարակությունը կծնի անազատության և անհավասարության նոր ձևեր²: Պետությունը և քաղաքացիական հասարակությունն իրար կապող օղակը՝ որպես երկուսի ժողովրդավարացման պայման, մարդն է՝ իր բնական և անօտարելի իրավունքներով: Իրավական կարգավորման ողջ իմաստը պետական իշխանության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատության միջև ներդաշնակ հավասարակշռության հաստատումն է:

Անկախության հռչակագրի իրավական նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի համար հստակ էր. այն՝ որպես նպատակային, ծրագրային բնույթի ակտ, ամրագրեց իրավական բարեփոխումների մի ռազմավարություն, որի խնդիրն էր խելամիտ, հավասարակշռված ինստիտուցիոնալ-սահմանադրական վերակառուցումների միջոցով իրականացնել հասարակական բոլոր հիմնարար կառույցների ժողովրդավարացումը, քաղաքացիական հասարակության կայացումը, իրավական, սոցիալական պետության կառուցումը, մարդու իրավունքների հաստատումը:

Զարգացման նման ռազմավարությունը չունեի ոչ մի ներքին խոչընդոտ, նույնիսկ քաղաքակրթական: Հայկական մշակույթն իր արժեքային համակարգով չէր հակասում ժողովրդավարության համընդհանուր հայեցակարգի հիմնարար սկզբունքներին: Միակ խոչընդոտը քաղաքական էր՝ պայմանավորված խորհրդային պետաիրավական համակարգի գոյությամբ, որը, սակայն, հաղթահարելի էր, հատկապես որ Անկախության հռչակագիրը ստեղծում էր դրա նախադրյալները: Անկախության հռչակագիրը այդ ռազմավարության կենսագործման իրավական բարեփոխումների մարտավարական ուղղություններ էր ճանաչում ՀՀ ինքնիշխանության երաշխիքները, սահմանադրական օրենսդրության ապագադափարականացումը, քաղաքական ու գաղա-

² Տե՛ս **Кин Дж.** Демократия и гражданское общество. М., 2001, էջ 50:

փարական այլակարծության ճանաչումը, իշխանությունների տարանջատման անհրաժեշտությունը, անցումը բազմակացութաձև տնտեսական համակարգի: Հայաստանում սկզբնավորվում էր նոր տիպի իրավունք, որին զուգահեռ պետք է ձևավորվեր նաև իրավագիտության նոր դպրոցը և լծվեր ամբողջատիրությունից հրաժարվելու և ժողովրդավարական, իրավական պետություն կառուցելու գործին:

Իրավագիտությունն ապրում էր դժվարին շրջան: Նրա առջև ծառայել էր իր մեթոդաբանական գինանոցը արմատականորեն վերակառուցելու խնդիրը՝ ազատագրվելու մարքսիզմ-լենինիզմի ճիրաններից: Այդ ժամանակներից սկսած՝ հայ իրավագիտության մեջ առաջ եկան սկզբունքորեն նոր մոտեցումներ և հայեցակարգեր, որոնք հայ իրավունքի զարգացումը կապեցին համաշխարհային իրավական գիտության նվաճումների հետ: Իրավագիտությունը կարող է դառնալ իրական գիտություն միայն կարծիքների բազմազանության, իրավական իրողությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքի հիման վրա: Մարքսիզմը, ինչպես և ցանկացած այլ ուսմունք, չունի մենաշնորհի իրավունք: Բայց նաև ոչ ոք իրավունք չունի արգելելու մարքսիզմը, քանի որ այն եղել և մնում է քաղաքական խոշորագույն ուսմունք: Այլ է մարքսիզմ-լենինիզմի պրակտիկան, որն ապացուցեց, որ կոմունիզմը անբաժանելի է բռնությունից:

Անկախության գործընթացի սկիզբը հռչակած Հայաստանի Հանրապետության համար իրավական համակարգի գործողությունը և դրա առաջընթացը հայտնվել էին բավականին բարդ և հակասական վիճակում: 1990 թ ԽՍՀՄ-ը դեռևս գոյատևում էր, իսկ Հայաստանի Հանրապետությունը, լինելով խորհրդային դաշնության սուբյեկտ, և միաժամանակ անկախ պետականություն կառուցելու քաղաքականություն որդեգրած հանրապետություն, իր իրավական հիմքերով հայտնվել էր հակասական վիճակում: Այդ հիմքերը սահմանված էին ԽՍՀՄ, ինչպես նաև ՀԽՍՀ սահմանադրական և ընթացիկ օրենսդրությամբ, որոնց գումարվում էր Հայաստանի երրորդ հանրապետության նորընտիր Գերագույն խորհրդի ստեղծած օրենսդրությունը:

Մովորական պայմաններում այդ իրավիճակը հակասական չէր կարող դառնալ, սակայն խորհրդային հասարակության պայմաններում այն նույնիսկ ձեռք էր բերում անտագոնիստական բնույթ, որովհետև խորհրդային պետաիրավական համակարգի հիմքում ընկած իրավական սկզբունքները լրջորեն հակասում էին նոր որդեգրված պետաիրավական սկզբունքներին: Անկախության հռչակագրի ընդունումը փաստորեն ազդարարում էր սահմանադրական իրավական զարգացման նոր ռազմավարություն, որը ներառում էր բարեփոխումներ մի քանի ուղղություններով՝ մարդու իրավունքների առաջնայնության ապահովում, ՀՀ իրական ինքնիշխանության ապահովում, սահմա-

նադրական օրենսդրության ապագա դափարակնացում, քաղաքական և գաղափարական այլակարծություն, իշխանությունների բաժանում, անցում շուկայական տնտեսության համակարգին:

Այս ուղղություններով իրականացվելիք իրավական նորամուծություններն իրենց հայեցակարգային բովանդակությամբ հակասության մեջ էին մտնում առկա սահմանադրական իրավական իրողությունների հետ:

Այսպիսով, իրավական քաղաքականության մեջ տեղի էր ունենում շրջադարձ. ամբողջատիրական, մարքսիստական խորհրդային սոցիալիստական իրավունքից անցում էր կատարվում իրավական նոր համակարգի, որի հայեցակարգային հիմքերն էին իրավական, ժողովրդավարական, սոցիալական և ինքնիշխան պետության հիմնարար սկզբունքները (տեսությունները): Այս պայմաններում սահմանադրական կարգավորումը հայտնվեց ճգնաժամային վիճակում:

Հայաստանի երրորդ հանրապետությունում ընթացող իրավական բարենորոգումները լրացումների, փոփոխությունների տեսքով իրենց նորմատիվ ամրագրումն էին ստանում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ: 1990-1991 թթ. ընթացքում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության տեքստը բազմիցս և էականորեն փոփոխվել է: Օրինակ՝ «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) և ՀՀ մյուս օրենսդրական ակտերի հայերեն տեքստերում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 1990 թ. նոյեմբերի 5-ի օրենքը, «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ 1990 թ. նոյեմբերի 13-ի օրենքը, «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) մեջ և ՀՀ մյուս օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 1991 թ. ապրիլի 15-ի օրենքը և այլն³:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության անդամակցությունը խորհրդային դաշնությանը և դրանով պայմանավորված դաշնային օրենսդրության առաջնությունը հանրապետական օրենսդրության նկատմամբ, դաշնային կառավարման ճգնաժամը, Ղարաբաղի հիմնախնդիրը՝ որպես քաղաքական գործոններ, կասեցրին նոր Սահմանադրության մշակման և ընդունման գործընթացը: Հետևաբար, 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1990 թ. դեկտեմբերի 10-ը իրավական բարեփոխումներն ընթանում էին առանձին ընթացիկ օրենքների ընդունմամբ և դրանով պայմանավորված՝ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելով:

Սակայն հին Սահմանադրության մասնակի նորացումը չէր վերացնում նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը, ընդհակառակը՝ ավելի հրամայական էր դարձնում այն: Գործող Սահ-

³ Տե՛ս «ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.)», Եր., 1995, էջ 39-40, 131:

մանադրությունը էական ներքին հակասությունների մեջ էր նոր սահմանադրական կարգերի հետ: Այն պարունակում էր այնպիսի դրույթներ, որոնք էլնում էին խորհրդային-կոմունիստական նախկին համակարգի գաղափարներից ու սկզբունքներից, չէին համապատասխանում իշխանությունների տարանջատման, պառլամենտարիզմի, իրավական պետության, քաղաքացիական հասարակության պահանջներին:

Գործող Սահմանադրությանն էին հակասում նաև նոր ընդունվող ազատական-իրավական օրենքները: Այդ հակասությունն անհնար էր լուծել առկա սահմանադրական-իրավական միջոցներով: Գրեթե ամեն մի նոր օրենք ընդունելիս անհրաժեշտ էր փոփոխություններ ու լրացումներ կատարել Սահմանադրության մեջ: Այդպիսի իրավիճակում կար երկու ելք՝ կա՛մ նոր Սահմանադրության նախագծի անհապաղ մշակում և ընդունում, կա՛մ անընդհատ փոփոխություններ ու լրացումներ կատարել գործող Սահմանադրության մեջ: Սակայն երկրորդ ճանապարհը մի կողմից շատ բարդ ու դժվարին գործ էր՝ իրավաբանական տեխնիկայի տեսակետից, իսկ մյուս կողմից՝ դանդաղեցնում էր օրինաստեղծ գործընթացը:

Այս պայմաններում իշխանությունները գնացին շատ ուրույն և հետաքրքիր ճանապարհով: **1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց «Սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին»**, որի համաձայն՝ «Մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»:

Փաստորեն, այդ օրենքի ընդունմամբ՝ հանրապետության օրենսդիր մարմինը բռնում էր գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չկատարելու ուղին: Նման «լողացող» իրավաբանական ձևակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետև ստացվում էր, որ ՀՀ-ն և՛ ուներ Սահմանադրություն, և՛ չուներ: «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» 1990 թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական օրենքով ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չէին կատարվում: Ստացվում էր յուրահատուկ իրավիճակ՝ ընթացիկ օրենքների գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Այդ սկզբունքը գործեց մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը:

1991-95 թթ. բարեփոխումների ռազմավարությունը մնաց նույնը՝ կառուցել «ժողովրդավարական իրավական հասարակություն»: Սակայն իրավական բարեփոխումների իրականացման իրավատեխնիկական ձևի տեսանկյունից այդ ժամանակաշրջանը միասեռ չէ, այլ անցել է մի քանի փուլ:

Առաջին շրջանում՝ 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1990 թ. դեկտեմբերի 10-ը, բարեփոխիչ օրինաստեղծ գործունեությունը իրականացվում էր ընթացիկ օրենքներ ընդունելով և դրանով պայմանավորված՝ ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելով: Հաջորդ շրջանը ներառում է 1990 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1991 թ. սեպտեմբերի 25-ը: 1990 թ. դեկտեմբերի 10-ին «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքով դադարեցվեց գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի ընդունված օրենքներին: Այդ պահից սկսած՝ իրավական համակարգի բարեփոխումները կատարվում էին ընթացիկ օրենքների ընդունմամբ, և հետևաբար՝ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չէին կատարվում, որովհետև ընթացիկ օրենքներն ունեին գերակայություն Սահմանադրության նկատմամբ:

Անկախության հռչակագրի և դրանից հետո ընդունված մի շարք օրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական բարեփոխումներն ընթացան հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Սահմանադրական օրենսդրության ապագադափարականացում (պետության անվան փոփոխում, նոր խորհրդանիշների ընդունում): 1990 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց «ՀԽՍՀ-ի վերանվանման մասին» օրենքը: Հանրապետության պաշտոնական անվանումից հանվեցին «Խորհրդային», «Սոցիալիստական» բնորոշումները: Մեր երկիրը անվանվեց Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Փոփոխություններ կրեցին նաև պետական խորհրդանիշները՝ հաստատվեց նոր պետական դրոշմ (1990 թ. օգոստոսի 24-ի «ՀՀ պետական դրոշի մասին» օրենքը), զինանշանը (1992 թ. ապրիլի 19-ի «ՀՀ պետական զինանշանի մասին» օրենքը), օրհներգը: Այդ օրենքներով վերականգնվեցին Առաջին հանրապետության խորհրդանիշները:

2. Քաղաքական և գաղափարական բազմակարծության ճանաչում: Այս ուղղությամբ մեծ նշանակություն ունեւր «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը (1991 թ. փետրվարի 26)⁴: Այդ օրենքը կարևոր նշանակություն ունեւր քաղաքական ազատության երաշխավորման և միակուսակցական քաղաքական համակարգի վերացման համար: Այն ճանապարհ էր բացում կամավորության հիմքերով ստեղծվող հասարակական-քաղաքական կազմակերպությունների ստեղծման ու գործունեության համար: Օրենքի իրավական բնորոշման համաձայն՝ «Հասարակական-քաղաքական

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 115-119:

կազմակերպությունը կամավոր հիմունքներով միավորված ՀՀ ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում է, ունի ծրագիր և կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին»:

«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքն ամրագրեց քաղաքական բազմազանության և հասարակական-քաղաքական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքները, որոնց ապահովմանն էր ուղղված Գերագույն խորհրդի 1991 թ. ապրիլին ընդունած որոշմամբ հայկումկուսի և նրա փաստացի մասը կազմող ՀԼԿԵՄ-ի ամբողջ ունեցվածքի պետականացումը: Նման որոշումը ընդունվել էր՝ նկատի ունենալով պետական իշխանության կառույցների հետ կոմկուսի սերտաճելը և հանրապետության քաղաքացիների մի քանի սերունդների հաշվին հսկայական միջոցներ կուտակելը: ՌԴ-ում նման որոշում ընդունվեց միայն «պուտչից» հետո՝ 1991 թ. օգոստոսին:

3. Ժողովրդաիշխանության սկզբունքի ճանաչում և կենսագործում: 1990 թ. Անկախության մասին հռչակագիրը ամրագրեց, որ հայոց պետականության կրողը ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա: 1991 թ. ապրիլի 2-ին Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «ՀՀ հանրաքվեի մասին», որի 1-ին հոդվածը սահմանում էր, որ հանրաքվեն ժողովրդի իշխանության իրականացման անմիջական միջոց է, որով լուծվում են պետական կյանքի ամենից կարևոր հարցերը, ընդունվում են օրենքներ և որոշումներ, վեր է հանվում հասարակական կարծիքը⁵:

4. Իշխանությունների տարանջատման սկզբունքի կենսագործում: Դեռ 1991 թ. հունիսի 25-ին Գերագույն խորհուրդը որոշել էր հիմնել ՀՀ պրեզիդենտի պաշտոն և մինչև 1991թ. դեկտեմբերի 31-ը անցկացնել պրեզիդենտի ընտրություններ: 1991 թ. օգոստոսի 1-ին Գերագույն խորհուրդը ընդունեց ՀՀ օրենքը «ՀՀ Նախագահի մասին»: Այդ օրենքով սահմանվում էր, որ ՀՀ Նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը⁶: Նախագահի ընտրությունների կարգը սահմանում էր 1991 թ. օգոստոսի 2-ին ընդունված «Նախագահի ընտրությունների մասին» օրենքը⁷:

5. Անցում տնտեսավարման շուկայական համակարգին: Իրավա-

⁵ Տե՛ս «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 7 (987), 15 ապրիլի 1991թ.», էջ 12-23:

⁶ Տե՛ս նույն տեղը, թիվ 15 (995), 15 օգոստոսի, 1991 թ., էջ 4-9:

⁷ Տե՛ս նույն տեղը:

կան բարեփոխումների միջոցով օրենսդրությունը պետք է ամրագրեր սեփականության ձևերի բազմազանությունը, պետության կողմից բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը, ազատ ձեռներեցության իրավունքը՝ պայմաններ ստեղծելով դրա զարգացման համար:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը հողը ճանաչում էր որպես պետական սեփականության բացառիկ օբյեկտ: Գերագույն խորհուրդը 1991 թ. հունվարի 22-ին ընդունեց «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց գյուղատնտեսական նշանակության հողը ապապետականացնելու և որպես մասնավոր սեփականություն տրամադրելու կարգը⁸: 1991 թ. հունվարի 29-ին ընդունված ՀՀ հողային օրենսգիրքը հողը ճանաչում էր որպես ազգային հարստություն, հանրապետության տարածքում բնակվող ժողովրդի սեփականություն՝ միաժամանակ սահմանելով, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի հողի նկատմամբ սեփականության իրավունք⁹:

Մասնավոր սեփականության իրավունքի երաշխիքների ստեղծման և ձեռնարկատիրական գործունեության ազատության ապահովման նպատակով ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. փետրվարի 13-ի որոշմամբ հաստատեց կառավարության ներկայացրած «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները» ծրագրային փաստաթուղթը¹⁰: Այդ իրավական ակտը սահմանում էր ՀՀ-ում սեփականաշնորհման հիմնական սկզբունքները, խնդիրներն ու ուղղությունները: Դրանք սեփականաշնորհման վերաբերյալ հետագայում ընդունվելիք իրավական ակտերի ու ծրագրերի մշակման հիմք դարձան:

«Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները» փաստաթուղթը բնորոշում էր սեփականաշնորհումը որպես գործընթաց, որի միջոցով տեղի էր ունենալու ՀՀ պետական ունեցվածքի փոխանցում քաղաքացիներին, նրանց խմբերին, ինչպես նաև ոչ պետական իրավաբանական անձանց՝ վաճառքի, մասնակի փոխհատուցման կամ անհատույց ձևով: Սեփականաշնորհումը դիտվում էր որպես տնտեսության մեջ պետական սեփականության չափերը արմատապես կրճատելու համալիր միջոցառում, որը նպատակաուղղված էր քաղաքացիների ազատությունների և ձեռնարկատիրական հնարավորությունների ընդլայնմանը, շուկայական տնտեսության ձևավորմանը, զանգվածային ստեղծագործական ներուժի արթնացմանը, տնտեսության արդյունավետության բարձրացմանը¹¹: Այսպիսով, «հիմունքների» կենսագործումը պետք է տնտեսավարման շուկա-

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 67-77:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 80-106:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 109:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 110:

յական համակարգին անցնելու իրավական նախադրյալներ ստեղծեր:

6. Պետության և անհատի փոխհարաբերությունների իրավական հայեցակարգի վերանայում: Դա նշանակում էր, որ անձնական շահերի նկատմամբ հասարակական-պետական շահերի առաջնայնության փոխարեն սահմանադրական օրենսդրության հիմքում պետք է դրվեր մարդու իրավունքների, պետության ու անհատի փոխհարաբախտության հայեցակարգը՝ ելնելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերից: Անկախության հռչակագիրը հիմք դրեց պետաիրավական «ինստիտուտների հումանիզացիային», մարդու իրավունքների համընդհանուր հայեցակարգը հռչակեց որպես Հայաստանի իրավական համակարգի բարեփոխման ուղղություն: Հռչակագիրը պաշտոնական-իրավական ձևով ազդարարեց «պետության և անհատի փոխհարաբերությունների հայեցակարգի վերանայում»: Սահմանադրական զարգացման նման ռազմավարության ընտրությունը նշանակում էր մարդու իրավունքների հարցում ինտերնացիոնալացման քաղաքականության պաշտոնական ճանաչում և նախորոշում էր այդ օրենսդրության զարգացման իրավական ուղղությունը, այն է՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի փոխառումը (ռեցեպցիան), որի ձևը, սակայն, անորոշ էր:

Անկախության հռչակագրի 9-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է մարդու այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են խոսքի, մամուլի, խղճի ազատությունը:

Անկախության հռչակագրի ընդունումից հետո մարդու իրավունքների ինստիտուտի կայացումը ընթանում էր երկու ուղղությամբ՝ խորհրդարանական օրենսդրական գործունեության միջոցով և մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի վավերացմամբ:

1991 թ. հունիսի 17-ին ընդունվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը¹²: Օրենքով հռչակվում էր «քաղաքացիների¹³ խղճի և կրոնական դավանանքի ազատությունը», երաշխավորվում էր անհատների իրավահավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից: Բացի այդ՝ օրենքը սահմանում էր, որ ՀՀ-ում եկեղեցին անջատված է պետությունից, և կարգավորում էր այդ սկզբունքի մի շարք երաշխիք-արգելքներ պետության և եկեղեցու համար:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 136-140:

¹³ Այստեղ և հետագայում ընդունված ակտերում օգտագործված է «քաղաքացի», այլ ոչ թե «մարդ» կամ «անձ» հասկացությունը: Դրա պատճառը խորհրդային իրավական տերմինաբանությունն էր: Խորհրդային սահմանադրություններն ամրագրում էին «քաղաքացու իրավունքները և ազատությունները», իսկ պետական իրավունքի գիտությունն օպերացիաներ էր անում «քաղաքացի» տերմինով: Հետևաբար՝ դա չպետք է դիտել ոչ քաղաքացիների իրավունքների նկատմամբ անտարբերության հայեցակարգային իրավական մոտեցում:

Այդ օրենքն ընդունվել էր՝ «դեկավարվելով Հայաստանի անկախության մասին հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր զարթոնքը, նրա դարավոր հոգևոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պայման, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների սկզբունքներով և հավատարիմ մնալով Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին»:

1978 թ. ՀԽՍՀ Սահմանադրության 47 հոդվածն ամրագրում էր «պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ իրենց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, նրանց աշխատանքի թերությունները քննադատելու քաղաքացու իրավունքները», իսկ 56 հոդվածի առաջին մասը՝ պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունները գանգատարկելու իրավունքը: Գանգատները պետք է քննության առնվեին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Սահմանադրության 56 հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կատարվել են օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցմամբ և սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, կարող են օրենքով սահմանված կարգով գանգատարկվել դատարանում: Խորհրդային բոլոր սահմանադրությունները չունեին անմիջական գործողություն: 1978 թ. Սահմանադրությունը վկայակոչում էր «օրենքով սահմանված կարգը և ժամկետները»: Հետևաբար, քաղաքացիների այդ սահմանադրական իրավունքը ձևական էր, որովհետև այդպիսի օրենք խորհրդային իրավական համակարգում չկար:

Օրենսդրական կարգավորման այդ բացը լրացրեց 1990 թ. դեկտեմբերի 4-ի՝ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը¹⁴, որը քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և գանգատների ճիշտ ու ժամանակին քննարկումը կարևոր էր համարում «դեմոկրատիայի ծավալման և կատարելագործման համար», իսկ բուն առաջարկությունները, դիմումներն ու գանգատները դիտում էր իրավունքների և օրենքով պաշտպանվող նրանց շահերի խախտման փաստերին արձագանքելու, այդ խախտումները վերացնելու և կանխելու միջոց: Այդպիսով, այդ օրենքը հիմնադրում էր մարդու իրավունքների պաշտպանության վարչական կարգ:

Անկախության հռչակագրի իրավական նշանակությունը մարդու

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 47-49:

իրավունքների հաստատման համար հանգում էր նրան, որ ոլորտի բարեփոխման կողմնորոշիչ հիմքեր էին դառնում «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքները, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները», մասնավորապես՝ մարդու իրավունքների հարգման սկզբունքը: Մակայն Հռչակագրում խոսք չկար ՀՀ-ում դրանց գործողության կարգի մասին¹⁵: Իրավական այդ բացի պատճառն այն էր, որ հանրապետությունը դեռևս համարվում էր դաշնության սուբյեկտ, իսկ արտաքին հարաբերությունների ոլորտը դաշնության մարմինների իրավասությունն էր: Բացի այդ՝ Հռչակագիրը անկախության հայտարարման ակտ չէր, այլ դրա գործընթացի սկիզբն ազդարարող ծրագրային փաստաթուղթ: Հայաստանը՝ մինչև անկախության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 25)՝ 1991 թ. ապրիլի 1-ին վավերացրեց «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը՝ կից ֆակուլտատիվ արձանագրությամբ»¹⁶: Մակայն միջազգային պայմանագրերի վավերացմամբ բաց էր մնում դրանց՝ ՀՀ իրավական համակարգում գործողության հարցը: Նոր օրենսդրությունը չէր կարգավորում միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության հարցը:

Այսպիսով, Անկախության հռչակագիրը որպես նպատակային, ծրագրային բնույթի ակտ, ամրագրեց իրավական բարեփոխումների մի ռազմավարություն, որի խնդիրն էր խելամիտ, հավասարակշռված ինստիտուցիոնալ-սահմանադրական վերակառուցումների միջոցով իրականացնել հասարակական բոլոր հիմնարար կառույցների ժողովրդավարականացումը, Հայաստանում ստեղծել քաղաքացիական հասարակություն, իրավական, սոցիալական պետություն, հաստատել մարդու իրավունքներ: Այդ ռազմավարության կենսագործման վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի քաղաքական ղեկավարությունը հրաժարվեց սահմանադրության գերակայության հիմնարար սկզբունքից և սահմանեց ընթացիկ օրենքների գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Նման գործելակերպը իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայության ցայտուն օրինակ է:

Բանալի բառեր – *օրենքի գերակայություն, սահմանադրության գերակայություն, ընթացիկ օրենք, իրավական բարեփոխումներ, քաղաքականության գերակայություն, իրավունքի գերակայություն*

¹⁵ ՌԽՖՍՀ-ն 1991 թ. նոյեմբերի 22-ին ընդունեց «ՌԽՖՍՀ-ում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հռչակագիրը»: Դրանում սահմանված էր, որ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն առաջնային են օրենքների նկատմամբ և քաղաքացիների համար անմիջականորեն առաջացնում են իրավունքներ և պարտականություններ (տե՛ս **Глушкова С. И.**, Права человека в России. М., 2006, էջ 288):

¹⁶ Տե՛ս **Հ. Մ. Խաչատրյան**, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Եր., 1997, էջ 369:

АРТУР ВАГАРШЯН – Декларация независимости Армении и законодательная реализация стратегий демократического, правового общества в 1990-1991 гг. – Декларация независимости от 23 августа 1990 г. – программно-целевой акт, закрепивший стратегию правовых реформ, которая ставила задачу превратить Армению в демократическое, правовое, социальное государство с приоритетом прав человека. Анализ претворения в жизнь этой стратегии показывает, что политическое руководство страны, по сути, отказалось от принципа верховенства Конституции в пользу верховенства текущего законодательства, явив очевидный пример верховенства политики над правом.

Ключевые слова: *верховенство закона, верховенство Конституции, текущее законодательство, правовые реформы, верховенство политики*

ARTUR VAGHARSHYAN - The Declaration of Independence of Armenia and the Legislative Realization of the Strategy of a Democratic, Legal Society in 1990-1991-ies. – The Declaration of Independence of 23 August, 1990, as a target-oriented act, established a policy of legal reforms, the aim of which was the implementation of a civil, democratic, legal and social state, as well as of human rights in Armenia. The analysis of the implementation of this strategy shows that the political authorities rejected the fundamental principle of the Constitution's supremacy and determined supremacy of current legislation over the Constitution. Such practice is a vivid example of supremacy of politics over the rule of law contrary to the principle of the supremacy of law over the politics.

Key words: *rule of law, supremacy of the Constitution, current legislation, legal reforms, supremacy of politics, rule of law*

НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ В ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ СТАНДАРТЫ ЭЛЕМЕНТОВ АНТИКОРРУПЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ

ГАГИК КАЗИНЯН

За последние годы в постсоветских странах проделана серьезная законодательная работа в сфере противодействия коррупции. Однако все законодательные преобразования обречены, если его субъекты не обладают соответствующими морально-нравственными качествами, лишены правовой культуры. Наличие названных качеств необходимо для эффективного противодействия коррупционным рискам. Ведь любой антикоррупционный закон, любая антикоррупционная технология преодолима, если участники общественных отношений намереваются его нарушить, в том числе из коррупционных побуждений.

Антикоррупционное воспитание и образование – важнейшие элементы борьбы с коррупцией. Это заключение само по себе не ново. Схожим образом рассуждал и древнекитайский мыслитель Конфуций, резко противопоставлявший регулирование политических отношений посредством норм добродетели управлению на основе закона. «Если, – писал он, – руководить народом посредством законов и поддерживать порядок при помощи наказаний, народ будет стремиться уклоняться (от наказаний) и не будет испытывать стыда. Если же руководить народом посредством добродетели и поддерживать порядок при помощи ритуала, народ будет знать стыд и исправится»¹.

И в наши дни многие авторы, исследующие вопросы антикоррупционной политики, считают образование и воспитание и на этой основе повышение уровня общественного правосознания одним из действенных методов борьбы против коррупции, средством ее предупреждения и предотвращения. Так, один из основателей «Трансперенси Интернешнл» Дж. Попе рассматривает проблему пресечения коррупции на основе системного, комплексного подхода. Он одним из первых разработал системную, целостную концепцию природы коррупции и борьбы с ней. Данная концепция отличается рядом особенностей².

Первой особенностью концепции Дж. Попе является то, что она направлена на пресечение коррупции, а не на наказание за различные ее проявления. Вторая особенность – на национальном уровне в системе противодействия коррупции автор выделяет 11 различных элементов: законо-

¹ См. «Всемирная галерея. Древний Восток». СПб., 1994, с. 189.

² См. **Ропе J.** TI Source Book, Confronting Corruption: The Elements of National Integrity System. Transparency International, 2000.

дательная власть, исполнительная власть, правоохранительные органы, государственный контроль, омбудсмен, органы по контролю и защите прав человека, общественные служащие, СМИ, гражданское общество, частный сектор, международные организации³.

Дж. Попе изображает данную систему в виде храма, надстройку которого составляют три ценности: сбалансированное развитие, верховенство закона и качество жизни. Эта надстройка базируется, как на колоннах, на вышеуказанных одиннадцати составляющих. Фундаментом храма являются общественные ценности, общественное сознание и бдительность.

Из этого следует, что все названные устои в «храме» пресечения и искоренения коррупции тесно взаимосвязаны. Ослабление одной из основ может привести к ослаблению другой, а ослабление нескольких из них способно привести к разрушению «храма», к нарушению сбалансированного развития, верховенства права и качества жизни.

Таким образом, соответствующая данной антикоррупционной политике модель гражданского общества – один из важнейших ее устоев, а общественные ценности рассматриваются в качестве основы всей системы (храма).

По мнению Дж. Попе, успех различных методов борьбы с коррупцией и эффективность соответствующих программ зависит от наличия сильного, состоявшегося гражданского общества и его членов, от их активности, бдительности и активной позиции. Для того чтобы общество было в состоянии осуществлять данную функцию, необходима информированность, соответствующее образование и воспитание.

Помимо отдельных исследователей, международные организации, действующие в сфере борьбы с коррупцией, предлагают различные методы и способы по предупреждению и предотвращению коррупции. Из анализа документов этих организаций явствует, что антикоррупционное воспитание и образование – важные средства в деле реализации антикоррупционной программы. Так, Секретариат ООН подготовил и представил на Конференции государств – участников Конвенции ООН против коррупции (октябрь 2011 г.) документ, в котором, в частности, говорится: «Вовлечение молодых людей в деятельность по достижению целей в области борьбы с коррупцией и обеспечения честности и неподкупности может принимать различные формы. Категория услуг для молодежи включает в себя деятельность по созданию прочной теоретической и этической базы, с тем чтобы помочь молодым людям понять, почему так важно участвовать в борьбе с коррупцией. Деятельность может включать информационно-пропагандистские кампании или разработку учебных программ, направленных на улучшение понимания учащимися коррупции и средств ее предупреждения и борьбы с ней. Деятельность в категории развития молодежи направлена на повышение уровня участия и стимулирование развития личности среди молодых людей

³ См. там же, с. 35.

при одновременном поощрении их приверженности борьбе с коррупцией. Это может быть достигнуто с помощью инициатив в области формального и неформального обучения, таких как программы профессиональной подготовки и обучения, которые помогают учащимся в принятии решений в профессиональной и личной жизни»⁴.

Подобный подход наводит на мысль о необходимости пересмотреть систему общественного образования и воспитания с точки зрения противодействия коррупции. Антикоррупционное воспитание и образование должны укоренить в человеке определенное ценностное отношение. В результате суммирования знания, ценностного отношения и воли должна сформироваться новая поведенческая правовая культура, при наличии которой индивид будет иметь стойкую антикоррупционную позицию. Особенностью антикоррупционной психологической установки личности является ее предопределенность, в силу чего она воспринимает и оценивает правовую информацию и процессы определенным образом, обнаруживает готовность действовать в соответствии с системой ценностей. Эта антикоррупционная правовая установка должна достичь уровня убеждения, превратиться во внутренний план человека, стать программой действий. На наш взгляд, основная проблема современного общества – это кризис законности и правопорядка. В его основе лежит низкий уровень правосознания населения и государственных служащих, недостаток правовой культуры. Эту неоспоримую реальность должна учитывать современная антикоррупционная политика.

Исследователи приходят к выводу, что «предстоит усилить внимание к формированию высокого правосознания как основного превентивного фактора в борьбе с коррупцией, а также использованию инструментов социологии в праве. Тем самым уменьшится зона неправомерного поведения, отчуждения от правомерного поведения. Личность и микроячейки общества должны стать ориентиром для формирования ценностей»⁵.

В литературе, посвященной борьбе с коррупцией, разработаны многие вопросы антикоррупционной политики⁶. Одним из таких вопросов является методика разработки и осуществление программы противодействия коррупции⁷. Эта программа, по мнению исследователей, должна включать в себя совокупность организационно-управленческих и информационно-пропагандистских мер. Совокупность организационно-управленческих мер по реализации антикоррупционной программы должна включать в себя также

⁴ «Молодежь и предупреждение коррупции». Справочный документ, подготовленный Секретариатом ООН // http://sartracce.ru/Pub_inter/unvscorr/files/VII85020r.pdf

⁵ «Участие институтов гражданского общества в борьбе с коррупцией: Научно-практическое пособие». М., 2013, с. 138.

⁶ См. «Коррупция: природа, проявления, противодействие». М., 2012; «Правовые основы противодействия коррупции». М., 2013; «Противодействие коррупции в субъектах Российской Федерации: научно-практическое пособие». М., 2013; «Участие институтов гражданского общества в борьбе с коррупцией: Научно-практическое пособие». М., 2013.

⁷ См. «Противодействие коррупции в субъектах Российской Федерации: научно-практическое пособие», с 44-60.

меры по организации и осуществлению антикоррупционного образования.

Таким образом, антикоррупционная программа должна быть комплексной и в нее необходимо включить также антикоррупционное образование; этот факт неоспорим и общепризнан. Вопрос заключается в том, чтобы антикоррупционное образование превратить в официально и формально закрепленную законодательством систему, чтобы она превратилась в непрерывно действующий образовательный механизм обучения молодых кадров правовым основам противодействия коррупции, и тем самым обеспечить реализацию антикоррупционной политики.

Имеется в виду, что в реальности антикоррупционное образование сейчас осуществляется фрагментарно, неформально. Преподавание предметов антикоррупционной направленности в большинстве своем зависит от усмотрения вузовского и корпоративного руководства.

Такое положение дел нельзя считать удовлетворительным. Проблема в том, что программы и предметы антикоррупционного образования не включены в образовательное законодательство. Значит, необходимо проводить мониторинг образовательного законодательства, в особенности образовательных стандартов всех уровней. Задача этого мониторинга – выявить, насколько наша образовательная и воспитательная система соответствует антикоррупционной политике государства.

Знакомство с образовательным законодательством всех уровней показывает, что в них не предусмотрены элементы антикоррупционного воспитания и образования. В связи с этим предлагается провести реформу действующего образовательного законодательства с тем, чтобы антикоррупционное воспитание и образование превратилось в одну из целей общественной системы воспитания и образования, стало составляющей образовательных стандартов и программ различных уровней.

Например, по специальности «Юриспруденция» в программу каждого юридического предмета должен быть включен комплекс юридических технологий, который используется в правовом механизме борьбы с коррупцией в данной сфере⁸. Возможны два способа интеграции элементов антикоррупционного образования в государственные образовательные стандарты: общий и предметный. Не исключается также одновременное применение двух способов интеграции в образовательные стандарты. Во-первых, следует разработать отдельный предмет, например, «Коррупция и антикоррупционная политика». Во-вторых, необходимо в образовательных стандартах по отдельным предметам и соответствующих образовательных программах предусмотреть отдельную тему, касающуюся коррупции и методов борьбы с ней в данной сфере.

Обучение антикоррупционным технологиям должно формировать знание и навыки по соответствующему правовому прогнозированию, экспертизе

⁸ Под юридическими технологиями подразумеваются методы и средства конструирования и реализации правовых решений, норм, институтов в целях эффективной борьбы с коррупцией (см. «Правовые основы противодействия коррупции». М., 2013, с. 37).

нормативных правовых актов и их проектов, антикоррупционному правовому моделированию, мониторингу и т.д. Такой подход применим и к другим специальностям.

На основе вышеизложенного можно констатировать, что борьба с коррупцией должна носить системный характер. В основе антикоррупционной политики и соответственно методов пресечения коррупции и борьбы с ней должна быть гражданская позиция членов общества, их активность, нетерпимость в отношении ее проявлений. Для достижения данной цели основополагающее значение приобретает антикоррупционное воспитание и образование, как базовый элемент всей системы борьбы с коррупцией.

Ключевые слова: *коррупция, антикоррупционное образование, образовательные стандарты, борьба с коррупцией*

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ – Հակակոռուպցիոն կրթության տարրերի ներմուծման անհրաժեշտությունը կրթական չափորոշիչներում – Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է կրի համակարգային բնույթ, իսկ մեթոդների հիմքում պետք է դրվեն հասարակության անդամների քաղաքացիական դիրքորոշումը, զգոնությունը, ակտիվությունը և անհանդուրժողականությունը: Դրական արդյունքի հասնելու համար կարևոր նշանակություն ունեն հակակոռուպցիոն դաստիարակությունը և կրթությունը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ամբողջ համակարգի հիմնարար տարրեր: Որպեսզի այդ կրթությունը վերածվի մշտապես գործող կառուցակարգի և կոռուպցիային հակազդելու արդյունավետ միջոցի, անհրաժեշտ է վերանայել պետական կրթական գործող չափորոշիչները և ներառել հակակոռուպցիոն կրթության թեմատիկա:

Բանալի բառեր – *կոռուպցիա, հակակոռուպցիոն կրթություն, կրթական չափորոշիչներ, կոռուպցիայի դեմ պայքար*

GAGIK GHAZINYAN – The Necessity of Introduction of the Anticorruption Education Elements into the Educational Standards. – The fight against corruption should be of systematic character. Anticorruption policy and methods of prevention of the corruption, as well as fight against it must be based on the civil position of the society members, their activity and vigilance, intolerance towards this negative phenomenon. Anticorruption education as the basic element of the system of fight against corruption has significant role in achieving these goals. In order to make this education an effective means, permanent and well-functioning mechanism of fight against corruption, it is necessary to revise current state educational standards and introduce relevant topics on anticorruption education into them.

Key words: *corruption, anticorruption education, standards of education, fight against corruption*

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԻԲԵՌՆԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

2000 թվականին Ավստրիայում կայացած ՄԱԿ-ի՝ «Հանցագործության կանխարգելման և իրավախախտողների հետ վարվելու» համաժողովում տրվել է կիրառական ցանցագործության հետևյալ բնորոշումը. «Կիրառական ցանցագործությունն ընդգրկում է ցանկացած հանցագործություն, որը կատարվում է համակարգչային համակարգի կամ ցանցի օգնությամբ, համակարգչային համակարգի կամ ցանցի շրջանակներում, կամ համակարգչային համակարգի կամ ցանցի դեմ»: Այդ համաժողովում առանձնացվել է նաև կիրառական ցանցագործության երկու կատեգորիա՝ կիրառական ցանցագործություն նեղ իմաստով, որն ընդգրկում է համակարգչային համակարգի և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված արարքները, և կիրառական ցանցագործություն լայն իմաստով (հանցագործություններ, որոնք կապված են համակարգչի օգտագործման հետ), որն ընդգրկում է համակարգչային համակարգի կամ ցանցի միջոցով կատարվող ցանկացած հանցավոր արարք կամ կապված է դրա հետ, ինչպես նաև հարակից հանցանքները:

Լայն իմաստով կիրառական ցանցագործություն կարելի է համարել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցանքը: Հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակության համար: Նշված նորմը, ի տարբերություն 1961 թվականի քրեական օրենսգրքի, նոր է, որը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտը սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ առարկան՝ ուրիշի գույքը: Անձը գույքային հանցագործություն կատարելու համար համակարգչային տեղեկատվության մեջ կարող է մտցնել կեղծ տեղեկություններ կամ փոխել եղած տեղեկությունը, որի միջոցով հնարավորություն է ստանում հափշտակելու գույքը:

Ինչպես նշվեց, քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ, եթե համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակ-

վում է զգալի չափի գույք: Քննարկման է ենթակա այն հարցը, թե որ չափը պետք է համարել զգալի: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 4-րդ մասի՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություններում զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ գողության միջոցով հափշտակության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 53 հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով մանր չափերով հափշտակության համար: Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով հափշտակության դեպքում մանր չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը): Ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում զգալի չափ պետք է համարել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը: Իսկ 500.000 դրամ գումարը (արժեքը), կարծում ենք, ևս պետք է գնահատել որպես զգալի չափ, քանի որ 500.000 դրամը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, իսկ խոշոր չափ է համարվում հինգհարյուրապատիկից մինչև երեքհազարապատիկը չգերազանցող գումարը: Բացի այդ՝ նորմը կարելի է մեկնաբանել հոգուտ հանցանք կատարած անձի:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմի յուրահատկությունը հափշտակության եղանակներից տարբերվում է նրանով, որ հափշտակությունը կատարվում է համակարգչային տեխնիկան օգտագործելով: Համակարգչային տեխնիկա ասելով պետք է հասկանալ այն սարքը, որը նախատեսված է հաշվողական և տեղեկատվական որոշակի խնդիրների լուծման ընթացքում համապատասխան տեղեկություն մշակելու համար, այսինքն՝ այնպիսի սարք, որի հիշողության մեջ կարող է մուտքագրվել, պահվել, կամ որով կարող է մշակվել տեղեկություն: Համակարգչային տեխնիկա կարելի է համարել ոչ միայն անհատական համակարգիչները, այլ նաև նոր սերնդի բջջային հեռախոսները: Պետք է նշել, որ հոդվածի ձևակերպումից պարզ չէ, թե համակարգչային տեխնիկայի օգտագործումը համարվում է հանցագործության կատարման եղանակ, միջոց, թե՛ գործիք: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ քննարկվող հանցագործությունը հափշտա-

կության ինքնուրույն եղանակ չէ, այլ հանցագործության միջոց է¹: Ուստի կարելի է օրենսդրորեն սահմանել, որ հափշտակությունը կատարվում է համակարգչային տեխնիկան օգտագործելու միջոցով:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով, ընդ որում՝ միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցանք կատարած անձը գիտակցում է, որ ուրիշի գույքին ապօրինի, շահադիտական նպատակով, անհատույց տիրանում է՝ օգտագործելով համակարգչային տեխնիկան, և ցանկանում է այդ:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթակա է հանցանքը կատարելու պահին 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը: Սակայն, կարծում ենք, 14-ից 16 տարեկան անձինք ևս տիրապետում են համակարգչային տեխնիկային, երբեմն ավելի հմտորեն, ունեն բավարար մտավոր զարգացածության աստիճան, որպեսզի գիտակցեն իրենց կողմից կատարված արարքի հանրային վտանգավորությունը, առավել ևս, որ գողության համար քրեական պատասխանատվության ենթակա է 14 տարին լրացած անձը: Ուստի կարծում ենք, որ քննարկվող հանցագործության սուբյեկտ կարելի է նախատեսել 14 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձին:

ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված ծանրացնող հանգամանքները գրեթե նույնանում են հափշտակությունների ծանրացնող հանգամանքների հետ: Հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է նախատեսում արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ինչպես նաև խոշոր չափերով կատարելու համար, իսկ երրորդ մասը՝ կազմակերպված խմբի կողմից, ինչպես նաև առանձնապես խոշոր չափերով կատարելու համար:

Սակայն կարծում ենք, որ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը առավել հաճախ կատարվում է տեղեկատվական համակարգ անօրինական մուտք գործելով, ուստի սա կարելի է ծանրացնող հանգամանք համարել:

ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը նյութական է, այսինքն՝ հանցագործությունն իրավաբանորեն ավարտված է համարվում, երբ հանցանք կատարած անձն իրական հնարավորություն է ստանում հափշտակված գույքը տնօրինելու կամ օգտագործելու: Գույքը փաստացի օգտագործելու կամ տնօրինելու հանգամանքը պարտադիր չէ հանցանքն ավարտված համարելու համար: Օրինակ, եթե համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ դրամական միջոցներ են փոխանցվել հանցավորի բանկային

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Հատուկ մաս (հինգերորդ հրատակություն փոփոխություններով և լրացումներով), Եր., 2012, էջ 393:

հաշվեհամարին, ապա հափշտակության ավարտ պետք է համարել ոչ թե դրամական միջոցները կանխիկացնելու, այլ դրամական միջոցները հանցավորի հաշվեհամարին փոխանցելու պահը, քանի որ այդ պահից սկսած՝ անձն օբյեկտիվորեն հնարավորություն ունի դրանք տնօրինելու:

Որոշակի յուրահատկություն ունի նաև համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության կատարման վայրը պարզելը, քանի որ շատ հաճախ օբյեկտիվ կողմը կազմող արարքը կարող է կատարվել մեկ վայրում (մեկ պետության տարածքում), իսկ հանրոքեն վտանգավոր հետևանքը կարող է վրա հասնել մեկ այլ վայրում (մեկ այլ պետության տարածքում): Եթե քննարկվող հանցագործությունը դիտարկենք որպես համակարգչային հանցագործություն, ապա ըստ տեսության, համակարգչային հանցագործությունների կատարման վայր պետք է համարել այն պետության տարածքը, որտեղ առաջացել են հանրոքեն վտանգավոր հետևանքները²: Իսկ եթե այն դիտարկենք որպես զուտ սեփականության դեմ ուղղված հանցանք, ապա հանցանքի վայր կարելի է դիտել նաև այն վայրը, որտեղ կատարվել է հանրոքեն վտանգավոր գործողությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործությունը «պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով կամ առանց դրա»: Դժվար չէ նկատել, որ «և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով կամ առանց դրա» բառակապակցությունը զուտ տեխնիկական պատճառներով չի հանվել հոդվածի սանկցիայից, քանի որ 2006 թվականից տուգանքը կարող է նշանակվել միայն որպես հիմնական պատիժ: Կարծում ենք՝ փոփոխման են ենթակա տուգանքի ձևով նախատեսված պատժատեսակի և՛ նվազագույն, և՛ առավելագույն չափերը, քանի որ համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով մանր չափերով հափշտակություն կատարելու համար ևս կարող է 100.000 դրամի չափով տուգանք նշանակվել (վարչական կարգով): Բացի այդ, եթե համեմատենք հափշտակության հատկապես այն եղանակների պատժաչափերի հետ, որոնց պարագայում զգալի չափ է համարվում նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (խարդախություն, յուրացում կամ վատնում), ապա այդ արարքների համար նախատեսված տուգանքի ձևով պատժի նվազագույն շեմ է համարվում նվազագույն աշխատավարձի երեքհարյուրա-

² См. у **Крылов В. В.** Информационные компьютерные преступления. М., 1997, էջ 23, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Հատուկ մաս, էջ 585:

պատիկը: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածի առաջին մասի սանկցիայով նախատեսված տուգանքի առավելագույն չափին, ապա ստացվում է այնպես, որ հնարավոր է 500.000 դրամի գույք հափշտակվի համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, այնինչ առավելագույն պատիժը տուգանքի ձևով չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը: Կարծում ենք, որ տվյալ դեպքում տուգանքի ձևով պատիժ կարելի է նախատեսել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, առավել ևս, որ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանցանքի համար սահմանված պատժի ստորին շեմը նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկն է:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը պետք է տարբերել հափշտակության մյուս եղանակներից՝ գողությունից, խարդախությունից, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններից:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը շատ նման է գողությանը և խարդախությանը. այն ներառում է ն՝ գողության հատկանիշներ, քանի որ կատարվում է գաղտնի, և՛ խարդախության հատկանիշներ, քանի որ կատարվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Այն պետք է տարբերել նաև բանկային պլաստիկ քարտերի միջոցով կատարվող հափշտակություններից, քանի որ բանկային պլաստիկ քարտերի «հափշտակությունը» (հետագայում դրամական միջոցներին տիրանալու համար) համարվում է հափշտակության որևէ եղանակով կատարվող հանցագործության նախապատրաստություն: Հափշտակված պլաստիկ քարտերի միջոցով բանկումատներից դրամ կանխիկացնելն անհրաժեշտ է որակել որպես գողություն, որովհետև սարքավորման աշխատանքի տեխնիկական գործընթացը չի խախտվում, և հափշտակությունը կատարվում է գաղտնի: Եթե անձը ձեռք է բերում ուրիշին պատկանող քարտ և այն ներկայացնում է առևտրային կազմակերպության ներկայացուցչին ու դրա միջոցով ձեռք է բերում գույք, իսկ դրամական միջոցները դուրս են գրվում քարտի օրինական սեփականատիրոջ հաշվից, և եթե այդ ժամանակ հանցագործն իրեն ներկայացնում է որպես քարտի օրինական տեր՝ «ապրանքային կտրոնի վրա կեղծ ստորագրություն դնելով», ապա տվյալ դեպքում առկա է խարդախություն, որը կատարվել է խաբեության եղանակով: Առևտրային կազմակերպության կամ խանութի աշխատակիցը պարտավոր է քարտը ներկայացնող հաճախորդին նույնացնել քարտի օրինական սեփականատիրոջ հետ, որը նա կատարում է ապրանքային կտրոնի և քարտի վրայի ստորագրությունները համեմատելով, սակայն հանցավորը, ներկայացնելով ուրիշին պատկանող բանկային պլաստիկ քարտը, խանու-

թի աշխատակցին մուրրության մեջ է գցում և հափշտակում է գույքը:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը չպետք է համարել խարդախությանը կատարող հափշտակությունների մասնավոր դրսևորում³:

Եթե համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով պատրաստվում է կեղծ փաստաթուղթ, այդ թվում նաև էլեկտրոնային ձևով, և ներկայացվում է անձին, ով, գնահատելով այդ փաստաթուղթը, հանցավորին հանձնում է գույք կամ գույքի նկատմամբ իրավունք, ապա այստեղ առկա է խարդախության հանցակազմը: Այսինքն՝ խաբեությունը, որը բնորոշ է միայն խարդախությանը, կարող է կատարվել նաև համակարգչային տեխնիկայի միջոցով, սակայն տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործությունը բացակայում է, քանի որ հափշտակությունը կատարվել է խաբեության եղանակով, իսկ համակարգչային տեխնիկան դարձել է խաբեության միջոց:

Համակարգիչը և սոցիալական ցանցերը օգտագործվում են նաև պոտենցիալ տուժողների հետ կապ հաստատելու, նրանց վստահությունը շահելու նպատակով: Նման պարագայում ևս, կարծում ենք, ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցանքը բացակայում է, քանի որ տվյալ դեպքում համակարգչային տեխնիկան համարվում է ոչ թե հափշտակության, այլ տուժողների հետ կապ հաստատելու միջոց, որից հետո է տեղի ունենում, օրինակ, խաբեությունը, և տուժողը, ընկնելով մուրրության մեջ, գույքը հանձնում է հանցավորին: Սակայն դատաքննչական պրակտիկայում ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով են որակվում նաև այն դեպքերը, երբ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ սոցիալական ցանցերի միջոցով տեղի է ունենում դրամական միջոցների հափշտակություն⁴:

Կարծում ենք՝ այն բոլոր դեպքերում, երբ անմիջական շփում կա հանցանք կատարած անձի և տուժողի միջև, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցանքը բացակայում է, իսկ եթե հափշտակությունը կատարվում է այնպես, որ հանցանք կատարող անձը և տուժողը չեն հանդիպում, այլ նրանց շփումը սկսվում և ավարտվում է կիբեռտարածքում, ապա արարքը պետք է որակել հափշտակություն, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ:

Այսպիսով, եթե համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվում է այնպիսի արարք, որը կարող է կատարվել նաև այլ տեխնիկայի օգնությամբ, ապա քննարկվող հանցակազմը բացակայում է: Օ-

³ ՀՀ Ազգային ժողովի օրակարգում ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որտեղ նախատեսված է նոր նորմ համակարգչային խարդախության համար:

⁴ Տե՛ս **Ахраменка Н. Ф.** Квалификация хищений, совершаемых с использованием компьютерной техники. Гродно, 1998, էջ 247:

րինակ՝ խարդախության դեպքում տուժողին մոլորության մեջ գցելու համար կարող են օգտագործվել տարբեր հնարքներ, այդ թվում՝ համակարգչի օգտագործմամբ կարող է պատրաստվել կեղծ փաստաթուղթ կամ պոտենցիալ տուժողներին գտնելու և նրանց վստահությունը ձեռք բերելու համար՝ օգտագործվել սոցիալական ցանցերը: Կարծում ենք՝ տվյալ դեպքում արարքը կհամարվի խարդախություն՝ անկախ այն բանից, որ խաբեություն կատարելու համար կեղծ փաստաթուղթը պատրաստվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, կամ տուժողներին վստահությունը ձեռք բերելու համար օգտագործվել է համակարգչային ցանցը:

Հնարավոր է նաև այնպիսի իրավիճակ, երբ հանցագործները համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով ստանան որոշակի գույքային օգուտներ: Օրինակ՝ վերջին ժամանակներում հակերներին հաջողվում է տարբեր վնասակար ծրագրերի միջոցով մուտք գործել անհատական համակարգիչներ, որոշակի տեղեկություն օգտատերերի համար դարձնել օգտագործման համար ոչ պիտանի: Այնուհետև նշված տեղեկությունը (ֆայլերը) օգտագործման համար պիտանի դարձնելու դիմաց պահանջել և ստանալ որոշակի գումար: Տվյալ դեպքում նշված արարքը չենք կարող որակել որպես համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով կատարված հափշտակություն, քանի որ այն պարունակում է ոչ թե հափշտակության, այլ շորթման հատկանիշներ: Իսկ վերջինիս համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 182 հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պահանջ ներկայացնելով, որը կարող է կատարվել անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով: Այսինքն՝ գույք հանձնելու համար ներկայացվող պահանջը կարող է կատարվել օրենքում թվարկված սպառիչ եղանակներով, որը չի ներառում տեղեկություն ոչնչացնելու սպառնալիքը: Գործող օրենսդրության պայմաններում համապատասխան հատկանիշների առկայության դեպքում արարքը համակարգչային տեղեկությունների ուղեփակման (մեկուսացման), ոչ պիտանի վիճակի բերելու մասով կարելի է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 253 հոդվածով՝ համակարգչային սաբոտաժ՝ որպես համակարգչային տեղեկատվության և անվտանգության դեմ ուղղված հանցագործություն: Իսկ այդ ճանապարհով դրամական միջոցներ «շորթելը», փաստորեն, չի առաջացնում քրեական պատասխանատվություն: Ուս-

տի կարծում ենք, որ կարելի է կա՛մ համալրել ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածը՝ դրանում նախատեսելով նաև նշված արարքի օբյեկտիվ կողմը, կա՛մ ՀՀ քրեական օրենսգրքի 253 հոդվածում նախատեսել ծանրացնող հանգամանք՝ շահադիտական դրդումներով կատարելը: Կարծում ենք, որ երկրորդ մտտեցումն ավելի ընդունելի է, քանի որ նկարագրված արարքը կատարելու դեպքում նախ խախտվում են համակարգչային տեղեկատվության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, այնուհետև՝ որպես լրացուցիչ օբյեկտ՝ սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Տարբերակելով համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակությունը գողությունից և խարդախությունից՝ անդրադառնանք նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների և համակարգչային տեխնիկայի միջոցով կատարվող հափշտակության միջև եղած տարբերություններին:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը պետք է տարբերել առանց հափշտակության հատկանիշի գույքային վնաս պատճառելուց, որի համար պատասխանատվություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի 184 հոդվածով, որում նախատեսված հանցագործության առանձնահատկությունն այն է, որ այս դեպքում հանցագործը չի տիրանում ուրիշի գույքին, այլ սեփականատիրոջը պատճառում է խոշոր չափերի գույքային վնաս՝ բաց թողնված օգուտի կամ գույքի անօրինական օգտագործման ձևով: Օրինակ, եթե համակարգչային տեխնիկայի օգնությամբ հանցավորը կարողանում է ստեղծել բջջային հեռախոսի «SIM» քարտի կրկնօրինակը և ուրիշի հաշվին իրականացնել հեռախոսային խոսակցություններ, որի համար հետագայում վճարում է տուժողը, ապա այստեղ ևս ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործությունը բացակայում է, քանի որ բացակայում է առարկան՝ ուրիշի գույքը: Տվյալ դեպքում սեփականատիրոջը պատճառվում է գույքային վնաս, իսկ հանցավորը չի տիրանում ուրիշի գույքին, այլ խնայում է իր միջոցներն ուրիշի հաշվին:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը պետք է տարբերել նաև համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից, որոնց համար պատասխանատվություն սահմանող նորմերը նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ գլխում: Այս հանցագործությունների հիմնական տարբերությունը հանցագործության առարկան է. համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններում առարկա է համարվում համակարգչային տեղեկությունը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործության առարկան է համարվում ուրիշի գույքը, որը հափշտակելու համար

օգտագործվում է համակարգչային տեխնիկա, և որը կարող է կատարվել նաև տեղեկությունն օգտագործելու միջոցով:

Մակայն բացառված չեն այն դեպքերը, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցանքը և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները համակցություն կազմեն. մասնավորապես՝ անձը հափշտակություն կատարելու համար կարող է ապօրինի մուտք գործել տեղեկատվական համակարգ, որի համար պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 251 հոդվածով: Թերևս բացառված է ՀՀ քրեական օրենսգրքի 252 հոդվածով («Համակարգչային տեղեկությունը փոփոխելը») նախատեսված հանցագործության հետ ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով նախատեսված հանցագործության իդեալական համակցություն կազմելու հնարավորությունը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 252 հոդվածի դիսպոզիցիան վկայակոչող է, այսինքն՝ համակարգչային տեղեկությունը փոփոխելու համար տվյալ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն, եթե բացակայում են ուրիշի գույքը հափշտակելու հատկանիշները:

Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակություն կատարելու քրեաիրավական բնութագրի խորը և բազմակողմանի ուսումնասիրումը հնարավորություն կտա այն սահմանազատելու հարակից համակարգչային հանցագործություններից, ինչը կատարված արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալու կարևոր գրավականներից է, իսկ համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով հափշտակություն կատարելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածի կատարելագործումը կնպաստի իրավական նորմի միատեսակ կիրառմանը:

Այս համատեքստում առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածը վերախմբագրել հետևյալ կերպ.

Հոդված 181. Համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով հափշտակություն

Համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով :

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) համակարգչային տեղեկատվական համակարգ ապօրինի մուտք գործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունը կարող է նպաստել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունների դեմ պայքարի արդյունավետությանը:

Բանալի բառեր – *համակարգչային հանցագործություն, հափշտակություն, հանցագործության միջոց, ուրիշի գույք, համակարգչային տեխնիկա*

АРМИНЕ МЕЛИКСЕТЯН – Хищение с использованием компьютерной техники как проявление киберпреступности. – С развитием информационных технологий возникли новые виды преступлений; хищение с использованием компьютерной техники – один из них. В статье проанализированы уголовно-правовой характер хищения с использованием компьютеров и особенности его квалификации, а также разграничены данный вид хищения и сходные компьютерные преступления. На основании проделанного анализа предлагается отредактировать соответствующую правовую норму, что будет способствовать единообразному её применению.

Ключевые слова: *компьютерное преступление, хищение, способ совершения преступления, чужое имущество, компьютерная техника*

ARMINE MELIKSETYAN - Plunder Committed through Computer Technology as a Type of Cybercrime. – The development of information technology witnessed the advent of new types of crimes, one of which is the plunder committed through computer technology. The criminal legal aspect of the above-mentioned crime and the peculiarities of its qualification are analysed, as well as the main features of distinguishing it from the other types of cybercrime are highlighted in the presented article. As a result of the analysis provided the author suggests revising the provision, which sets criminal responsibility for the committal of plunder through computer technology. The author states that such a change will contribute to the unified application of the discussed provision.

Key words: *cybercrime, plunder, means of crime, another's property, computer technology*

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐՃՄԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՆԴԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ, ՆԵԼԼԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Անչափահասների նկատմամբ վարույթի հատուկ կարգը առաջին հերթին հիմնվում է անչափահասների տարիքային, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկությունների վրա, որոնք պահանջում են նրանց իրավունքների իրացման լրացուցիչ երաշխիքներ: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը ելակետային է համարում այն դրույթը, որ անչափահասները, տարիքով պայմանավորված, իրենց իրավունքների և օրինական շահերի իրացման օրենսդրական երաշխիքների կարիք ունեն: Ակնհայտ է, որ դա հետևանք է այն բանի, որ օրենսդիրը գիտակցում է անչափահասի տարիքային առանձնահատկությունները և անչափահասների իրավունքների ու ազատությունների լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտությունը:

Անչափահասների իրավունքների և օրինական շահերի երաշխիքները պետք է ապահովվեն քրեական դատավարության բոլոր փուլերում: Դրան հատուկ ուշադրություն է դարձված Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների 7.1 կետում, որը վերաբերում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը («Պեկինյան կանոններ», հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով): Նշված միջազգային փաստաթղթում հատուկ ուշադրություն է դարձվում անչափահասների վերաբերյալ քրեական գործով վարույթի կարճմանը, մասնավորապես՝ 11.1 կանոնի համաձայն՝ անչափահաս իրավախախտների գործերի քննության ժամանակ, հնարավորության սահմաններում, չպետք է դիմել 14.1 կանոնում նշված իշխանության իրավասու մարմինների կողմից գործի պաշտոնական քննությանը:

Ըստ Պեկինյան կանոնների նշված դրույթի մեկնաբանության՝ գործի կարճումը, այդ թվում՝ քրեական դատավարությունից գործը հանելը և հաճախ այն համայնքների օժանդակ ծառայություններին հանձնելը, իրավական շատ համակարգերում սովորաբար գործածվում է պաշտոնական և ոչ պաշտոնական հիմքերով: Այդ փորձը թույլատրում է սահմանափակել անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու բացասական հետևանքները (օրինակ՝ դատվածության ու դատավճռի խարանդ): Շատ դեպքերում լավագույն արդ-

յունք է տալիս իշխանության իրավասու մարմինների կողմից գործին չմիջամտելը: Այսպիսով, առավել արդյունավետ կարող է լինել գործի կարճումը ամենասկզբում, առանց այն այլընտրանքային (սոցիալական) մարմիններին փոխանցելու: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ խախտումների հետ կապված գործերին, երբ ընտանիքը, դպրոցը և ոչ պաշտոնական սոցիալական վերահսկողություն իրականացնող այլ ինստիտուտներ ձեռնարկել են կամ մտադիր են ձեռնարկել ներգործության կառուցողական պատշաճ միջոցներ: Պեկինյան կանոններում հատուկ ուշադրություն է դարձվում ընտանիքի հսկողության գործունին, այսինքն՝ քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անչափահասի նկատմամբ հսկողություն իրականացնելու առաջնահերթության իրավունքը պատկանում է ընտանիքին: Պեկինյան կանոնների 18.2-ի համաձայն՝ «Ոչ մի անչափահաս չի կարող մասնակցորեն կամ լրիվ հանվել ծնողների հսկողությունից, եթե դա չի արդարացվում նրա գործի հանգամանքներով»: 18.2 կանոնում նշվում է ընտանիքի կարևոր դերը, որը «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 10.1 հոդվածին համապատասխան համարվում է «հասարակության բնական և հիմնական բջիջը»: Ընտանիքի շրջանակներում ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են ապահովելու իրենց երեխաների խնամքը և հսկողությունը: 18.2 կանոնի համաձայն՝ երեխաների բաժանումը ծնողներից համարվում է ծայրահեղ միջոց: Դրան կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ գործի փաստերն արդարացնում են այդ լուրջ քայլը (օրինակ՝ երեխաների հետ դաժան վարվելաձևը):

Ինչպես տեսնում ենք, միջազգային հանրությունը անչափահասների հանցավորության հետ կապված խնդիրների իդեալական լուծում է համարում ընտանիքի ինստիտուտի օգտագործումը, ինչպես նաև դրա հիման վրա ստեղծված այլ ինստիտուտներ: Այս կապակցությամբ ուշագրավ է այլ երկրների օրենսդրական փորձի և պրակտիկայի ուսումնասիրությունը: Այսպես, Նոր Զելանդիայում անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս ելնում են այն բանից, որ իրավախախտների ընտանիքները պարտավոր են նրանց հետ կիսել պատասխանատվությունը: Դրա շնորհիվ ստեղծվել է այնպիսի ինստիտուտ, ինչպիսին է «Ընտանեկան խորհրդակցությունը»: Համաձայն «Երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների մասին» 1989 թ. օրենքի՝ ընտանեկան խորհրդակցությանը ներգրավվում են իրավախախտի ազգականները, տուժողները, ոստիկանները, սոցիալական աշխատողները և այլ շահագրգիռ անձինք: Անչափահասը հնարավորություն ունի նման խորհրդակցությունում ընդունելու իր մեղքը, ինչը իրավունք է տալիս ընտանիքին, խորհրդակցության մյուս մասնակիցների համաձայնության դեպքում, որոշելու անչափահասի պատի-

ժը¹: Ընդ որում՝ այդ պատիժը կապված չէ որևէ իրավունքից զրկելու հետ, այլ դաստիարակչական բնույթ ունի: Այս ինստիտուտի արդյունավետությունը հաստատվում է անչափահասների հանցավորության զգալի կրճատմամբ, ինչը նկատելի է ներկայումս:

Այդուամենայնիվ հարկ է նշել, որ Նոր Զելանդիայում ընտանեկան խորհրդակցության ինստիտուտը միայն այլընտրանք է դատարանին, ինչը թույլ չի տալիս պնդելու, թե այդ երկրում լիովին լուծված են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերոնշյալ խնդիրները: Սակայն այնտեղ ներդրված ինստիտուտը միանգամայն հիմնավորված կարելի է համարել որպես շատ հաջողված քայլ անչափահասների նկատմամբ արդարադատությունը առավելագույնս մարդասիրական դարձնելու խնդիրը լուծելու ուղղությամբ:

Անչափահասների նկատմամբ արդարադատությանը համանման վերաբերմունք են ցուցաբերում նաև այլ պետություններ, որոնք իրենց օրենսդրությունում ամրագրել են հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անչափահասներին վերաբերող հատուկ ընթացակարգեր: Օրինակ՝ Ֆրանսիայում «Անչափահասների իրավախախտումների մասին» 2 փետրվարի 1945 թ. № 45-174 օրենքը հռչակում է, որ դեռահասին դաստիարակելը (վերադաստիարակելը) ավելի կարևոր է, քան պատժելը, որը նախատեսված է քրեական օրենսգրքի պատժամիջոցներով: Դրանով իսկ ձևակերպվում է անչափահասի իրավունքը, որը վերաճում է սկզբունքի, համաձայն որի՝ յուրաքանչյուր անչափահաս իրավախախտ ունի ուղղվելու իրավունք և չի կարող զրկվել դրանից ոչ մի պատրվակով²: Այդ իրավունքի իրացման հետևանքը անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերը ընդհանուր իրավասության դատարաններում քննելու արգելքն է, ինչը ձևակերպված է վերոնշյալ օրենքի հոդված 1-ում: Այսինքն՝ անչափահաս մեղադրյալները (կասկածյալները) չեն ենթարկվում այն նույն դատական ընթացակարգերին, ինչ մյուս իրավախախտները, ինչով ապահովվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջների կատարումը:

Առանձնահատուկ պետք է նշել, որ եվրոպական երկրներում գոյություն չունի միասնական կարծիք անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման սկզբունքների վերաբերյալ: Այսպես, Շվեյցարիան ստորագրել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան որոշ վերապահումներով: Այդ երկիրը չի ընդունել հոդված 40-ը և մի շարք այլ հոդվածներ: Եվ դա այն դեպքում, որ հենց Շվեյցարիան է

¹ Sté u **Рудгрэйв Т.** Новозеландская революция в ювенальной юстиции // "Правосудие по делам несовершеннолетних. Мировая мозаика и перспективы в России". Выпуск 2, кн. 1. М., 2000, էջ 40:

² Sté u **Калистов М. В.** Ювенальная юстиция Франции // "Человек: преступление и наказание". Сборник материалов межвузовской научно-теоретической конференции. Рязань, 2014, էջ 305-307:

այն երկիրը, որտեղ առանձնահատուկ վերաբերմունքը անչափահասների արդարադատության նկատմամբ ունի ամենահին պատմությունը: Ներկայումս այստեղ գործում է «յուվենալ» դատարանների համակարգը: Հատկանշական է, որ եթե գործի քննությունը նախապատրաստելու փուլում յուվենալ դատավորը հաստատում է, որ հանցագործության պատճառը ընտանիքում ստեղծված վիճակն է՝ ծնողների հետ հարաբերությունները կամ հոգեբանական մթնոլորտը ընտանիքում, նա կարող է ընդունել դաստիարակչական բնույթի որոշում³: Դա որոշ չափով նման է քրեական հետապնդումը դադարեցնելու մեր ընթացակարգին, քանի որ նույն կերպ քրեական գործը փաստացի կարճվում է նախքան դատական նիստում դրա նյութերի քննությունը: Չնայած Շվեյցարիայում «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի նորմերի իրացման հարցում դրսևորված ընտրողական վերաբերմունքին, այնուամենայնիվ նկատելի է ժամանակակից բոլոր պետություններին բնորոշ մոտեցումը, որի էությունը հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անչափահասի նկատմամբ դատական ընթացակարգերի կիրառումից խուսափելու ձգտումն է:

Յուվենալ արդարադատության մարմիններին առաջադրվող խնդիրը անչափահաս իրավախախտի համար այնպիսի պայմաններ ստեղծելն է, որոնք, չվնասելով նրա հոգեկանը, կկարողանան մոտեցնել նրան այն բանի գիտակցմանը, որ կատարված գործողություններն անընդունելի են ոչ միայն հասարկության, այլև հենց իր համար: Այսինքն՝ նրա մեջ ձևավորել օրինապահ վարքագծի սոցիալականորեն նշանակալի պահանջմունքի սաղմեր: Դրանով իսկ անչափահասի համար ապահովվում է հասարակության կողմից մերժված չլինելու երաշխիք: Յուվենալ արդարադատության հիմքում ընկած սկզբունքներից մեկը, որը ոչ բոլոր երկրներում է ձևակերպված որպես ինքնուրույն նորմ, սակայն որի առկայությունը ակներև է անչափահասների վերաբերյալ այդ երկրներում գործող օրենսդրության վերլուծությունից, հետևյալն է. պատժից դեպի վերադաստիարակում՝ շրջանցելով դատական ընթացակարգերն ու քրեական պատիժը: Այս սկզբունքին լիովին համապատասխանում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառմամբ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի Նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 425 հոդվածը, որի համաձայն՝ «Եթե մեղադրական եզրակացությամբ կամ մեղադրական ակտով դատարան ուղարկված վարույթի արդյունքում պարզվում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է

³ St' u Шмидт М. Уголовное законодательство Швейцарии в отношении несовершеннолетних и лиц молодежного возраста // "Цели и средства уголовной и уголовно-исполнительной политики в отношении несовершеннолетних". Сборник материалов международной научно-практической конференции. Вологда, 2010, էջ 76-78:

ուղղվել առանց քրեական պատասխանատվության ենթարկվելու, ապա դատարանը որոշում է կայացնում անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91 հոդվածով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին»:

Այս նորմը հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասի համար փաստացի նախատեսում է դատական կարգով քրեական պատժից խուսափելու հնարավորություն: Այսինքն՝ այս առումով քրեադատավարական օրենսդրությունը համապատասխանում է ոչ միայն միջազգային օրենսդրության նորմերին, այլև հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ հասարակության և պետության վերաբերմունքն ավելի մարդասիրական դարձնելու միտումներին:

Անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգում նկատվում են նաև վերականգնողական արդարադատությանը բնորոշ նշաններ, ինչը քրեադատավարական օրենսդրության զարգացման մարդասիրական միտումներից մեկն է աշխարհի առաջադեմ շատ երկրներում⁴: Այսպես, անչափահասների նկատմամբ արդարադատությանը բնորոշ է սոցիալական այն միջավայրը վերականգնելու ձգտումը, որտեղ ապրում է անչափահասը, ինչը կնպաստի նրա մեջ սոցիալապես օգտակար հատկանիշների, ինչպես նաև օրինապահ վարքագծի խթանմանը: Այսինքն՝ անչափահասի նկատմամբ քրեական դատավարությունը դադարեցնելու հնարավորությունը սահմանող նորմերը ուղղված են քրեական արդարադատության պատժիչ ազդեցությունը հաղթահարելուն, դեռահասների մեջ ինքնավերահսկում և մարդկանց հետ ոչ կոնֆլիկտային շփումների հմտություններ զարգացնելուն, ինչպես նաև չափահաս հանցագործների քրեական աշխարհի հետ առճակատվելու հավանականությունը կանխելուն:

Մակայն վերականգնողական արդարադատության սկզբունքներին լիովին համապատասխանելու համար անհրաժեշտ է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմերը նպատակաուղղել հաշտեցման միջոցառումների (հանդիպումներ, զրույցներ և այլն) կազմակերպմանը⁵: Այսինքն՝ ցանկալի է, որ համապատասխան նորմերը ներառեն անչափահաս կասկածյալի

⁴ St`u **Ожиганова М. В.** Восстановительное правосудие как альтернативная форма уголовного судопроизводства по делам несовершеннолетних // "Уголовная юстиция". Научно-практический журнал. Томск, 2013, № 2 (2), էջ 38-40:

⁵ St`u **Загрядская Е. А.** Некоторые вопросы применения процедуры восстановительного правосудия по уголовным делам о преступлениях, совершенных несовершеннолетними // "Актуальные проблемы применения норм уголовно-процессуального права при расследовании преступлений". Материалы Международной научно-практической конференции. М., 2012, էջ 122-128:

(մեղադրյալի) պարտավորությունը՝ հատուցելու իր կողմից պատճառված վնասը: Ցավոք, Հայաստանի Հանրապետության գործող քրեադատավարական օրենսդրությունում նման պարտավորություն նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ մի շարք այլ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործեր կարճելիս ևս ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում այնպիսի ընթացակարգերի գործողություն, որոնք համապատասխանում են վերականգնողական արդարադատության սկզբունքներին: Դրանով հանդերձ՝ տուժողը, համաձայն գործող քրեադատավարական օրենսդրության, իրավունք ունի բողոքարկելու քրեական գործը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը: Սա նշանակում է, որ քրեական գործերի քննության պրակտիկայում տուժողի՝ նման իրավունքի առկայությունը հանգեցնում է տուժողի հետ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճումը համաձայնեցնելու անհրաժեշտությանը: Այսինքն՝ այդ իրավունքը հիմք է դառնում վերականգնողական արդարադատությանը բնորոշ ընթացակարգերի իրականացման համար:

Բողոքարկման իրավունքը հանգեցնում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը համաձայնեցնելու պրակտիկային: Ընդ որում՝ նման որոշում ընդունելիս քննիչը միշտ հաշվի է առնում տուժողի հետ հաշտության առկայությունը, ինչպես անչափահասի, այնպես էլ նրա օրինական ներկայացուցիչների բացասական վերաբերմունքը կատարված հանցագործությանը, տուժողից ներողություն հայցելը: Այսինքն՝ ակնհայտ են վերականգնողական արդարադատությանը հատուկ տարրերը: Ուստի, թեև անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում վերականգնողական ընթացակարգեր, սակայն նշված մեխանիզմի կիրառման պրակտիկան առանց դրանց չի գործում:

Չնայած այն բանին, որ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու պրակտիկայում գոյություն ունեն վերականգնողական արդարադատության միջոցառումներ, այնուամենայնիվ ճիշտ կլինի, որ ոչ միայն գիտակցվի դրանց անհրաժեշտությունը, այլև դրանք նախատեսվեն գործող քրեադատավարական օրենսդրությամբ: Դա անհրաժեշտ է առաջին հերթին համապատասխան հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների ուղղման և վերադաստիարակման համար: Նշված միջոցառումները իրականացնելու ընթացքում դրսևորվում է անչափահասի պատրաստակամությունը՝ մերժելու այն արժեքները, որոնցով առաջնորդվելով նա հանցագործություն է կատարել: Անչափահասի՝ ճիշտ ուղի վերադառնալու

մտադրությունների լրջությունը հավաստող գնահատականը քննիչի կողմից նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելն է, որի ձևական մոտեցումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վերականգնողական արդարադատության այն միջոցառումները, որոնց հիման վրա հնարավոր կլինի միանշանակ եզրակացության հանգել այն մասին, որ անչափահասի վերադաստիարակումը հնարավոր է առանց քրեական պատիժ կիրառելու:

Այդ միջոցառումների շարքում առաջնահերթ նշանակություն ունեն տուժողի հետ հաշտեցումը և կատարած հանցագործության համար գործուն գոջարը⁶: Դրանից բացի, օրենսդրական կարգով կարող են տեղ գտնել նաև պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ կատարվող գործողությունները: Այդ ամենը կարող է երաշխավորել, որ անչափահասը չի մերժվի հասարակության կողմից, չարացած չի լինի նրա հանդեպ և չի դառնա հասարակության համար կորած մարդ:

Առանձնահատուկ պետք է նշել նաև այն, որ Նախագծում նախատեսվում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում միայն այն դեպքերում, երբ վերջիններս կատարել են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն: Համանման մոտեցում են ցուցաբերում նաև ԱՊՀ և լավ զարգացած յուրվեճալ արդարադատությամբ երկրները: Կարծում ենք, որ նման կարգավորումը պայմանավորված է այն բանով, որ անչափահասի արդյունավետ վերադաստիարակման հնարավորության մասին եզրակացությունը պետք է արվի նաև կատարված հանցագործության ծանրության աստիճանի և բնույթի վերլուծության հիման վրա: Միանգամայն ակնհայտ է, որ ծանր հանցագործություն կատարած անչափահասը հազիվ թե ուղղվի այն մեթոդներով, որոնք կիրառվում են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած անչափահասների նկատմամբ: Նրա համար արդյունավետ կարող են լինել ավելի ուժեղ մեթոդներն ու միջոցները, այսինքն՝ քրեական պատիժը: Ինչ վերաբերում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած անչափահասներին, ապա համարվում է, որ նրանք պարզապես սխալվել են, ուստի և նրանց ուղղվելը միանգամայն հնարավոր է, և արդյունքի կարելի է հասնել առանց քրեական պատժի կիրառման:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս ոչ միշտ է ուշադրություն դարձվում դաստիարակչական

⁶ Sté u Шестакова Л. А. Восстановительные процедуры как один из векторов модернизации производства по делам несовершеннолетних // "Проблемы ювенальной юстиции и системы исполнения наказаний". Материалы Международной научной конференции. Самара, 2011, էջ 201-204:

ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտությանը: Այսպես, նախատեսվում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում, սակայն ոչինչ չի ասվում նրանց նկատմամբ դատախարակչական ներգործության միջոցներ կիրառելու մասին: Ակնհայտ է, որ դա բավարար չէ անչափահասի լիարժեք վերադաստիարակման մասին խոսելու համար: Անհրաժեշտ է ուղղակիորեն նշել, որ քրեական հետապնդման դադարեցումը պետք է հանգեցնի դատախարակչական ներգործության միջոցների կիրառմանը, այնպես, ինչպես դա ուղղակի նախատեսված է Նախագծի 425 հոդվածով: Չէ՞ որ հենց միայն հանդիպումները, գրույցները տուժողի հետ ստիպում են անչափահասին վերաիմաստավորելու կատարվածը, գոջալու, փոխելու սեփական վերաբերմունքը իր վարքագծի, գործողությունների և շրջապատի մարդկանց հետ հարաբերությունների նկատմամբ, ինչն արդեն ինքնըստինքյան դատախարակման գործընթացի հիմք է, որի նպատակն է փոխել անչափահասի հիմնական հակասոցիալական դիրքորոշումները՝ դարձնելով դրանք սոցիալապես օգտակար: Հենց այդ պատճառով էլ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական մեխանիզմը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով վերականգնողական արդարադատության հիմնական սկզբունքներն ու պահանջները:

Քրեական հետապնդման դադարեցում նախատեսված է նաև հանցակազմի բացակայության հիմքով: Այդ մասին մասնավորապես նշվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 35 հոդվածի 2-րդ կետում: Նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու տրամաբանությունը միանգամայն հասկանալի է և համապատասխանում է ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ քրեական դատավարության ընդհանուր հայեցակարգին: Դրա էությունն այն է, որ հանցագործությունը կատարելու պահին քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձը չի կարող դիտվել իբրև հանցագործության սուբյեկտ, ուստի և կբացակայի հանցակազմը: Այսինքն՝ նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը հնարավոր է միայն այն անչափահասների նկատմամբ, որոնք հանցագործությունը կատարելու պահին չեն հասել քրեական պատասխանատվության տարիքի:

Քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելը առաջին հայացքից թվում է ակնհայտ, ուստի և հատուկ նորմատիվ ամրագրում չպահանջող մի բան⁷: Այդ առումով հարց է ծագում. ինչո՞ւ է օրենսդիրը հատուկ նորմ ներառել ևս մեկ անգամ նորմատիվ կերպով ամրագրելու

⁷ См. u Капустин Д. Ф. Прекращение уголовного преследования в отношении лиц достигших возраста привлечения к уголовной ответственности // "Всероссийская научно-практическая конференция "Преступность в России: состояние и проблемы борьбы с ней". Сборник материалов. Воронеж, 2008, էջ 89-90:

այն, ինչն առանց այդ էլ ակնհայտորեն բխում է քրեական և քրեադատավարական օրենսդրության արդեն իսկ գոյություն ունեցող նորմերի համակարգից: Դրա պատճառը պետության ձգտումն է՝ առավելագույնս երաշխավորելու անչափահասների պաշտպանությունը նրանց հոգեվիճակի առանձնահատկությունների համար անցանկալի ազդեցությունից: Բացի այդ, նման ազդեցությունը, ելնելով քրեական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասների՝ դեռ ոչ բավարար մտավոր զարգացումից, չի կարող ճիշտ ընկալվել, հետևաբար և ունենալ դաստիարակչական ներգործություն:

ՀՀ քր. դատ. օր.-ում նշված նորմը ներառելու նպատակը անչափահասների՝ միջազգային օրենսդրության մեջ ամրագրված իրավունքներն ու օրինական շահերը առավելագույնս երաշխավորելն է: Չնայած քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ակնհայտությանը՝ օրենսդրությունը ձգտում է լրացուցիչ ապահովագրել հնարավոր սխալներից և չարաշահումներից⁸: Ընդ որում, նա ձգտում է ընդգծել, որ անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանությունը իր համար պաշտպանության հատուկ օբյեկտ է, և որ նրա նկատմամբ ցանկացած ոտնձգություն անթույլատրելի է: Քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս կարևոր է անչափահասի մտավոր զարգացածության աստիճանը, որը ենթադրում է անչափահասի կողմից իր կատարած արարքի հասարակական վտանգավորության չափի գիտակցում: Հենց դրան է առանձնահատուկ ուշադրություն դարձվում ՀՀ քր. դատ. օր.-ի 35 հոդվածի 9-րդ կետում, երբ նշվում է, որ անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքի:

Պետք է նշել, որ դադարեցման ենթակա են նաև քրեական հետապնդումները այն անչափահասների նկատմամբ, որոնք թեև հասել են քրեական պատասխանատվության տարիքի, սակայն հոգեկան ոչ լիարժեք զարգացման պատճառով, որը կապված չէ հոգեկան հիվանդության հետ, չեն կարողացել ամբողջովին գիտակցել իրենց գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը⁹: Այսինքն՝ օրենսդրի համար հանցակազմի բացակայության պատճառով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս

⁸ St' u Семьянова И. С. Прекращение уголовного дела (уголовного преследования) в отношении лиц, не достигших возраста уголовной ответственности // "Российский следователь", 2003, № 7, էջ 21-24:

⁹ St' u Храмцова В. В. Проблемы прекращения уголовного преследования в отношении несовершеннолетних в связи с отставанием в психическом развитии // "Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе" Сборник материалов XII международной научно-практической конференции. Красноярск, 2009, էջ 240-243:

կարևոր է հենց մտավոր զարգացածության աստիճանը հաշվի առնելը, որը ենթադրում է համապատասխան անչափահասի ունակությունը՝ լիարժեքորեն գիտակցելու իր գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը: Դա կարևոր է, քանի որ այն դեպքում, երբ անչափահասը չի գիտակցում իր գործողությունների փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, ապա դաստիարակչական ներգործության միջոցներն ու քրեական պատիժը դրական նշանակություն չեն ունենա: Ավելին, անչափահասը, չհասկանալով դա, կարող է ընկալել որպես իր նկատմամբ թշնամական վերաբերմունք, ինչը կարող է հրահրել այդ անչափահասին դրսևորելու նոր ագրեսիա, ինչպես նաև նպաստել, որ նրա մեջ ձևավորվեն կայուն հակասոցիալական դիրքորոշումներ:

Միջազգային օրենսդրության և աշխարհի տարբեր երկրների քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա է անչափահասների վերաբերյալ օրենսդրությունը հետզհետե ավելի մարդասիրական դարձնելու միտում: Ընդամին՝ ամենաշատը կարևորվում է անչափահասների նկատմամբ քրեական հետապնդումը քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու, ինչպես նաև անչափահաս լինելու պատճառով դադարեցնելու մասին նորմերը արդարադատության մեխանիզմի մեջ ներառելը: Ընդ որում, առաջին դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է արդարացնող հիմքով՝ հանցակազմի բացակայության կապակցությամբ, երկրորդ դեպքում՝ ոչ արդարացնող հիմքով՝ անչափահաս լինելու կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության հետագա կատարելագործման առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում քրեական հետապնդման դադարեցումը մեղադրյալի անչափահաս լինելու կապակցությամբ: Ընդ որում, առավել ընդունելի պետք է համարել նշված գործողության իրականացումը ոչ միայն անչափահաս լինելու հիման վրա, այլև անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելով դաստիարակչական ներգործության միջոցներ կիրառելու կապակցությամբ: Այսինքն՝ հարկավոր է հաշվի առնել անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության հարկադրական միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մեխանիզմի նորմատիվ ամրագրման՝ այլ երկրների օրենսդրական փորձը:

Ըստ այդմ՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝

1) նորմը պետք է կիրառվի քրեական դատավարության բոլոր փուլերում, քանի որ դա առավելագույնս կերաշխավորի անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը,

2) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը պետք է կայացնեն պաշտոնատար այն անձինք, որոնք իրականացնում են գործի վարույթը քրեական դատավարության համապատասխան փուլում,

3) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել տուժողի կարծիքը և դրա հետ կապված անչափահաս մեղադրյալի գործողությունները՝ ուղղված տուժողի հետ հաշտվելուն,

4) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կարող է ընդունվել միայն անչափահաս մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ,

5) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել նաև այն սոցիալական միջավայրի յուրահատկությունները, որում ապրում է և շարունակելու է ապրել անչափահաս մեղադրյալը,

6) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման համար անհրաժեշտ է ներգրավել նաև այնպիսի մասնագետների, ինչպիսիք են հոգեբանն ու մանկավարժը, խնամակալության մարմինների, ինչպես նաև այն ուսումնական հաստատության ներկայացուցիչները, որում սովորում է անչափահասը,

7) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ պետք է լինի դաստիարակչական ներգործության համապատասխան միջոց կիրառելու ցուցում:

Եթե քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նորմը հաշվի առնի վերոնշյալ բոլոր պահանջները, ապա այն լիովին կհամապատասխանի անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման գոյություն ունեցող պահանջներին: Դրա արժեքը առաջին հերթին կլինի այն, որ այն ընդունելով կդրվեն ոչ թե հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների նկատմամբ պատժիչ, այլ դաստիարակչական ներգործության հիմքերը: Դրանից կշահի ոչ միայն անչափահաս մեղադրյալը, այլև հասարակությունը, պետությունը, քանի որ նրանք չեն օտարի իրենց անդամին, այլ ինտեգրելով նրան հասարակությանը՝ կնպաստեն այն բանին, որ նա հետագայում իր սոցիալական ակտիվությամբ, աշխատանքով զգալի օգուտներ կբերի:

Մակայն նշված նորմի ընդունումը, հետագայում նաև կիրառումը իմաստ ունեն միայն դաստիարակչական ներգործության միջոցների լավ մշակված ինստիտուտի առկայության դեպքում, որն արդյունավետ կլինի այն անչափահասի համար, ում նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը: Առանց նման ինստիտուտի անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելն անիմաստ է, որովհետև գուրկ է սոցիալական հեռահար նպատակից: Ուստի օրենսդրի

խնդիրն է, դաստիարակչական ներգործության միջոցների կիրառմամբ անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մեխանիզմ մշակելուց զատ, ստեղծել դաստիարակչական ներգործության միջոցների ինստիտուտ: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ պահանջներ, որոնք կարող են արդյունավետ դարձնել նշված միջոցների կիրառումը և թույլ կտան վերադաստիարակել համապատասխան անչափահասին՝ դարձնելով նրան հասարակությանը պիտանի անդամ: Այսինքն՝ նման միջոցների կիրառումը պետք է անչափահասի մեջ սոցիալապես օգտակար հատկանիշների ձևավորման հիմք դառնա:

Բանալի բառեր – *անչափահաս, քրեական գործ, դաստիարակչական ներգործության միջոցներ, քրեական գործի կարճում, քրեական հետապնդման դադարեցում*

САМВЕЛ ДИЛБАНДЯН, НЕЛЛИ АГАБАБЯН – *Некоторые вопросы прекращения производства по делам о преступлениях, совершенных несовершеннолетним, и прекращения уголовного преследования.* – Из анализа уголовно-процессуального законодательства РА выясняется, что при прекращении уголовного преследования несовершеннолетних не всегда уделяется внимание мерам воспитательного воздействия. Между тем, не применяя их, нельзя говорить о перевоспитании малолетних правонарушителей. Несомненно, что прекращение уголовного преследования должно повлечь за собой воспитательные меры. В статье сделаны предложения, способные обеспечить полноценную защиту прав и законных интересов несовершеннолетних в уголовном судопроизводстве.

Ключевые слова: *несовершеннолетний, меры воспитательного воздействия, прекращение уголовного дела, прекращение уголовного преследования*

SAMVEL DILBANDYAN, NELLY AGHABABYAN – *Some Issues on Termination of Criminal Proceedings and Criminal Prosecution with Regard to Minors.* – The analysis of the criminal procedural legislation of the Republic of Armenia reveals that not always attention is paid to the imposition of educational measures at the stage of termination of the criminal proceedings against minors. Thus, it provides the termination of criminal proceedings against minors, but provides nothing in regard to the application of educational measures. Obviously, this regulation is not enough to ensure the full reeducation and correction of delinquents. Undoubtedly, the termination of criminal prosecution should lead to the application of educational measures. The highlighted issues and suggestions may be of great importance in providing the protection of the rights and legitimate interests of minors in criminal proceedings.

Key words: *minor, criminal case, educational measures, termination of criminal proceedings, termination of criminal prosecution*

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ТЕОРЕТИЧЕСКИХ И ПРАКТИЧЕСКИХ ПОДХОДОВ К РАССЛЕДОВАНИЮ МАССОВЫХ БЕСПОРЯДКОВ

ВАГЕ ЕНГИБАРЯН

Одним из действующих методов познания в общественных науках, в том числе и криминалистике, является так называемый исторический метод. Как заметил А. В. Шмонин, при сравнении характерных особенностей предмета исследования в прошлом и настоящем устанавливаются сходства и различия¹. В этой связи представляется необходимым провести ретроспективный анализ развития криминалистических знаний о расследовании массовых беспорядков в России и Армении.

История криминалистики рассматривается, в частности, в работах А. И. Винберга, Р. С. Белкина, И. Ф. Крылова². Особо хотелось бы отметить работы И. А. Возгрин, Ю. П. Гармаева, С. Ю. Косарева, А. М. Кустова, С. Н. Чурилова и А.В. Шмониной³.

Борьбы с массовыми беспорядками как в Армении, так и в России не нова.

Политическая и экономическая нестабильность, разрушение идеологических, нравственных основ жизни общества, резкое усиление активности лиц с противоправными установками, осложнения и противоречия в межнациональных отношениях и другие негативные обстоятельства на рубеже 80-х – 90-х годов XX века влекли за собой

¹ См. **Шмонин А. В.** Общие положения методики расследования преступлений, совершаемых с использованием банковских технологий: Дис. ... д-ра юрид. наук. М., 2007, с. 63.

² См., например, **Белкин Р. С., Винберг А. И.** История советской криминалистики. Этап возникновения и становления науки (1917 – 1930-е годы). М., 1982; **их же.** История советской криминалистики. Формирование частных криминалистических теорий (1940-е – 1950-е годы): Учебное пособие. М., 1983, **Крылов И. Ф.** Были и легенды криминалистики. Л., 1987.

³ **Возгрин И. А.** Криминалистическая методика расследования преступлений. Минск., 1983; **его же.** Введение в криминалистику: История, основы теории, библиография. СПб., 2003; **Чурилов С. Н.** Криминалистическая методика: История и современность. М., 2002, **Гармаев Ю. П.** Теоретические основы формирования криминалистических методик расследования преступлений: Дис. ... д-ра юрид. наук. М., 2003; **Косарев С. Ю.** Криминалистические методы расследования преступлений: история возникновения и развития, СПб., 2004; **Кустов А. М.** История развития и становление российской криминалистики. М., 2005; **Шмонин А. В.** Предпосылки зарождения криминалистической методики (IX – XVII в.) // «История науки и техники», 2005. № 8, с. 40-54; «Предпосылки криминалистической методики (вторая половина XVII – первая половина XIX в.)» // «История науки и техники», 2005. № 9, с. 39-53; Зарождение криминалистической методики // «История науки и техники», 2005. № 11, с. 30-36; «Развитие криминалистической методики (советский и постсоветский периоды)» // «История науки и техники», 2005. № 12, с. 31-47); «История зарождения и становления криминалистической методики» // «Методика расследования преступлений». М., 2006, с. 6-90.

различные виды преступного насилия⁴, в том числе и массового характера.

На фоне общего стремительного роста преступности массовые беспорядки как наиболее опасный вид преступлений приобрели ряд характерных признаков, к которым, прежде всего, следует отнести их политизацию, техническую оснащенность, профессионализм участников и, как следствие, возросшую тяжесть последствий⁵.

Таким образом, проблема борьбы с массовыми беспорядками обострилась в конце 80-х годов XX века. Возникавшие в том или ином регионе СССР, в том числе РСФСР и Армении, массовые беспорядки приводили нередко к принятию решений о чрезвычайном положении на региональном уровне, что во многом предопределяло их расследование. В частности, из-за ненадлежащего осуществления местными органами своих функций большинство вопросов, связанных с организацией и обеспечением деятельности следственных групп, приходилось решать в централизованном порядке. Прекращение работы предприятий, связанных с жизнеобеспечением населения, создавало для прикомандированных следователей значительные бытовые сложности, нередко вынуждая их тратить силы и время на борьбу за собственное выживание. Эвакуация населения, мигрирующие потоки беженцев оказывали воздействие на организацию следственных действий, межнациональная вражда и нетерпимости – на тактику их проведения. Непрерывавшиеся беспорядки, реальная угроза жизни вынуждали следователей прибегать к содействию войсковых подразделений⁶.

Характерными примерами расследования массовых беспорядков, в том числе на почве межнациональных конфликтов, а также попыток насильственного изменения конституционного строя являлась деятельность следственно-оперативных групп (далее СОГ) в феврале 1988 г. в Сумгаите, сентябре 1988 г. в Степанакерте, ноябре 1988 г. в Кировабаде, июне 1989 г. в Ферганской и Гурьевской областях, январе 1990 г. в Баку и НКАО, феврале 1990 г. в Душанбе, в 1991 г. в Южной Осетии, Молдавии и т.д.

Среди массовых беспорядков, имевших место на территории бывшего СССР, нельзя не отметить сумгаитские события 26-28 февраля 1988 г. Число жертв составило 197, в том числе 100 работников милиции. 32 человека, в основном армяне, было убито. Задержано более 42 человек⁷.

Как показала работа данных СОГ, в ходе массовых беспорядков, как правило, совершались и другие преступные деяния: посягательства на общественный порядок и общественную безопасность, порядок управления, на жизнь, здоровье, свободу и достоинство личности, государственное, общественное и личное имущество и др.

⁴ См. **Карпец И. Н.** Преступность: иллюзии и реальность. М., 1992, с. 219.

⁵ См. **Майдыков А. Ф.** Проблемы совершенствования деятельности органов внутренних дел в борьбе с массовыми беспорядками // «Совершенствование деятельности органов внутренних дел и внутренних войск по предупреждению и пресечению массовых беспорядков». Материалы всесоюзной научно-практической конференции. М., 1991, с. 33.

⁶ См. **Григорьев В. Н.** Расследование преступлений в чрезвычайных условиях (правое обеспечение, организация, методика): Дис. ... д-ра юрид. наук. М., 1993, с. 16.

⁷ См. «Արվեստիկան Հայաստան», 22.3.1988, № 68 (20389).

При всем различии указанные преступления имеют внутреннее единство: все они сопряжены с массовыми беспорядками. Связи между ними носят различный характер и могут быть прослежены по единству субъектов, места, времени совершения. В одних случаях, например, участники массовых беспорядков в процессе погромов, разрушений, поджогов совершают и другие преступления – насилия и убивают женщин и детей, застигнутых в жилищах, которые они пришли громить, снимают с них украшения, забирают приглянувшиеся вещи. Нередко подобные преступления совершают лица, которые сами в погромах и поджогах не участвуют, но используют обстановку массовых беспорядков в своих преступных целях. Порой усматривается своеобразная организованность в деятельности различных преступных групп: одна группа идет по улице и громит дома, другая движется с некоторым интервалом и, пользуясь беспомощностью разгромленных жилищ, похищает уцелевшие ценности, третья подвозит бензин, другие горючие вещества и сжигает дома и квартиры, уничтожая следы совершенных преступлений.

Первый опыт и результаты работы указанных СОГ нашли отражение в многочисленных публицистических статьях в периодической печати, информационных и аналитических материалах в юридических журналах.

Захлестнувшая страну волна массовых беспорядков выявила полную неготовность правоохранительных органов к действиям в данных условиях. Это побудило к созданию соответствующих методических материалов, предназначенных для практических работников. Следственное управление УВД Ташкентского горисполкома выпустило в 1989 г. методическое пособие по первоначальным действиям следственных групп в условиях особого положения⁸. На следующий год Главное следственное управление МВД СССР опубликовало статью, содержащую методические рекомендации по расследованию погромов квартир⁹.

Заметным явлением в изучении рассматриваемых проблем стал специальный выпуск «Бюллетеня Главного следственного управления МВД СССР», содержащего подборку нормативных актов и методические рекомендации по раскрытию и расследованию преступлений, совершенных в ходе массовых беспорядков, возникших на почве межнациональных конфликтов¹⁰.

Ряд разделов методических рекомендаций, таких, как характеристика массовых беспорядков, допросы свидетелей, потерпевших и подозреваемых, обеспечение личной безопасности сотрудников при проведении следственных действий и некоторые другие, содержали новую научную информацию и полезные практические рекомендации.

Вместе с тем авторам многих разделов этого издания, как отметил В. Н. Григорьев, не удалось, очевидно в силу сравнительной новизны фактического материала и его труднодоступности, избежать повторения азбучных для

⁸ См. **Григорьев В. Н.** Первоначальные действия следственной группы в условиях особого положения. Ташкент, 1989.

⁹ См. **Гаухман Л. Д.** Методические рекомендации по расследованию погромов квартир // «Бюллетень ГСУ МВД СССР», 1990, № 3, с. 16-22.

¹⁰ См. «Бюллетень ГСУ МВД СССР», 1990, № 6.

юристов положений, банальных выводов и рекомендаций, не отражающих специфику расследования преступлений в чрезвычайных условиях¹¹, в том числе массовых беспорядков.

Подобные недостатки отсутствуют, как нам представляется, в издании Ташкентской высшей школы МВД СССР по организации следственной работы в условиях чрезвычайного положения¹². В этом издании на основе анализа и обобщения опыта работы следственных групп в ряде регионов Закавказья и Средней Азии показывается специфика расследования преступлений в условиях чрезвычайного положения. Значительное внимание уделено особенностям неотложных следственных действий. Рассмотрено участие следователей в войсковых операциях и поисковых мероприятиях. Отмечены недостатки следственной работы в условиях чрезвычайного положения, высказаны рекомендации по ее совершенствованию.

В последующем увидел свет еще ряд публикаций, в которых анализируются различные стороны расследования массовых беспорядков в чрезвычайных условиях¹³. Активные научные исследования ее проблем велись в Академии РФ, некоторых вузах и НИИ МВД РФ, в НИИ проблем укрепления законности и правопорядка Генеральной прокуратуры РФ.

Определенный вклад в разработку проблем расследования массовых беспорядков в указанный период внесли Г. Пичкалева, Г. Чуглазов, А. Шаталов и др.¹⁴. Так, например, в 1993 г. А. С. Шаталов исследовал проблемы раскрытия и расследования преступлений, совершаемых в условиях массовых беспорядков, а также тактические особенности их технико-криминалистического обеспечения¹⁵.

Считалось, что массовые беспорядки в Армении (в советский период) остались в безвозвратном прошлом, т. к. исчезла порождавшая их почва, однако в конце XX – начале XXI вв. они с новой силой захлестнули страну, принося человеческие жертвы, нанося материальный ущерб экономике и

¹¹ См. Григорьев В. Н. Расследование преступлений в чрезвычайных условиях (правовое обеспечение, организация, методика): Дис. ... д-ра юрид. наук. М., 1993, с. 16.

¹² См. Григорьев В. Н. Организация следственной работы в условиях чрезвычайного положения. Ташкент, 1991.

¹³ См. Григорьев В. Н. Прокурорский надзор за расследованием преступлений в условиях чрезвычайного положения // «Социалистическая законность», 1991. № 9, с. 33-36; *его же*. Расследование преступлений в чрезвычайных условиях // «Правоведение», 1992, № 3, с. 52-60; Чуглазов Г. Как расследовать массовые беспорядки // «Социалистическая законность», 1991, № 9, с. 27-29; Петелин Б. Я. Управление следственными аппаратами в особых (экстремальных) условиях оперативной обстановки // «Совершенствование управления органами внутренних дел в особых условиях: Сборник научных трудов». М., 1992, с. 48-52 и др.

¹⁴ См., например, Чуглазов Г. Указ. соч., с. 27-29; Пичкалева Г. И. Некоторые особенности тактики допроса лиц по делам о массовых беспорядках в условиях межнациональных конфликтов // «Место и роль органов внутренних дел в предупреждении и разрешении межнациональных конфликтов». Материалы научно-практической конференции. М., 1993, с. 204-206.

¹⁵ См.: Шаталов А. С. Техничко-криминалистическое обеспечение раскрытия и расследования преступлений, совершаемых в условиях массовых беспорядков: Дис. ... канд. юрид. наук. М., 1993.

населению, а также породив новую депортацию людей с мест постоянного проживания. В результате появились беженцы, обездоленные семьи и т.п.

При анализе состояния и динамики данного вида преступлений в специфических условиях армянской действительности следует учитывать устойчивую тенденцию к их росту, масштаб, а также организованность и тяжесть последствий.

В дореформенный период криминалистическим проблемам массовых беспорядков в Армении, как и в России, уделялось мало места и внимания. В СССР считалось, что с построением социализма отпала реальная почва для возникновения массовых беспорядков.

Наряду с квалификацией массовых беспорядков (нередко действия, рассматриваемые в теории уголовного права как массовые беспорядки, на практике квалифицируются как групповое хулиганство, групповое нарушение общественного порядка, групповой захват оружия и т.п.), существует проблема их расследования. Последняя же в немалой степени предопределяется отсутствием в Армении его разработанных теоретических, организационных и методико-криминалистических основ.

Наши исследования показали, что массовые беспорядки в РА чаще всего зарождаются на почве социально-политических конфликтов. На практике они обычно возникают вследствие несанкционированных публичных мероприятий.

Например, причинами сентябрьских событий 1996 г., мартовских и апрельских событий 2003 г., 2004 г. стали результаты прошедших выборов, но поводом послужило проведение несанкционированных митингов, которые вышли из-под контроля¹⁶.

В целом круг рассматриваемых преступлений, связанных с массовыми беспорядками, достаточно широк и разнообразен. Он зависит от тех конкретных обстоятельств, в результате которых эти условия сложились, и включает различного вида преступления, которые создали условия или иным образом связаны с массовыми беспорядками. Так, при расследовании массовых беспорядков параллельно расследуются групповые действия, нарушающие общественный порядок, ряд государственных преступлений, таких, как нарушение национального и расового равноправия, призывы к насильственному свержению или изменению конституционного строя, блокирование транспортных коммуникаций или отдельных местностей в целом. С ними часто сопряжены общеуголовные преступления – убийства, кражи, грабежи, разбой.

Несмотря на насущную потребность в научных разработках расследования массовых беспорядков, в Армении до нашей работы¹⁷ ими не занимались. В России появился ряд исследований, в которых рассматриваются криминалистические проблемы борьбы с массовыми беспорядками¹⁸.

¹⁶ См. «Արշիվ», 26.3.2003, № 56 (1946), 11.4.2003, № 68 (1958) и др.

¹⁷ **Енгибарян В. Г.** Криминалистическая теория расследования массовых беспорядков. М., 2014.

¹⁸ См. **Багмет А. М., Бычков В. В.** Расследование массовых беспорядков. Учебное пособие. Челябинск, 2007; **Лядов Э. В.** Типичные ситуации, возникающие на первоначальном этапе расследования преступлений, совершаемых в условиях массовых беспорядков лицами, отбывающими наказание в исправительном учреждении // «Уголовное суд-

Например, в А. М. Багмет и В. В. Бычков рассмотрели такие вопросы расследования массовых беспорядков, как их уголовно-правовую и криминалистическую характеристики, особенности возбуждения уголовных дел по их фактам, обстоятельства, подлежащие доказыванию при расследовании, а также особенностей производства отдельных процессуальных и следственных действий (задержание подозреваемых, освидетельствование, осмотр места происшествия, допрос, предъявление для опознания, обыск и назначение экспертиз)¹⁹.

Потребность в таких концептуальных положениях вызвана, прежде всего, массовыми беспорядками, с регулярным постоянством происходящим по постсоветскому пространству. Вместе с тем их значение представляется более универсальным. По мере возможной стабилизации оперативной обстановки в государстве они, на наш взгляд, не утратят своего практического значения. Как показывают события, в обществе с объективной неизбежностью регулярно случаются различные социальные катаклизмы. Нет никаких гарантий, что через какое-то время они не возникнут вновь, причем в самых неожиданных, изощренных формах. Поэтому общество должно постоянно поддерживать оптимальный уровень готовности к самозащите в подобных ситуациях, иметь для этого специальную систему.

Ключевые слова: *массовые беспорядки, расследование, методика, следственно-оперативная группа, условия чрезвычайного положения*

ՎԱՆԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ – Ձանգվածային անկարգությունների քննության տեսական և գործնական մոտեցումների կայացումն ու զարգացումը – Ձանգվածային անկարգությունների տեսական ու գործնական հիմքերի խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է վերջին տարիներին այդ տեսակի հանցագործությունների աճով:

Դրանց քննության մեթոդիկայի գիտական հիմքերի հետազոտության համար անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել զանգվածային անկարգությունների քննության վերաբերյալ կրիմինալիստիկական գիտելիքների սկզբնավորման և զարգացման պատմությունը:

Հեղինակն ուսումնասիրել է զանգվածային անկարգությունների քննության վերաբերյալ կրիմինալիստիկական գիտելիքների սկզբնավորման և զարգացման պատմությունը՝ սկսած անցյալ դարի 90-ականներից մինչև մեր օրերը: Ինչպես ցույց է տալիս փորձը, քննության ընթացքում առաջացող թերություններն ու բացթողումները հիմնականում պայմանավորված են այս տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի բացակայությամբ:

Բանալի բառեր – *զանգվածային անկարգություններ, քննություն, մեթոդիկա, օպերատիվ-քննական խումբ, արտակարգ դրություն*

производство: проблемы теории, нормотворчества и правоприменения». Сборник научных трудов. Выпуск 4, Рязань, 2009, с. 102-106; **Новиков А. В.** Актуальные проблемы установления объективных признаков состава массовых беспорядков // «Вестник Саратовской государственной академии права», 2007, № 2, с. 109-112 и др.

¹⁹ См. **Багмет А. М., Бычков В. В.** Указ. соч.

VAHE YENGIBARYAN – *Formation and Development of Theoretical and Practical Approaches on Investigation of Mass Disorders.* – The necessity of in-depth study of theoretical and practical grounds of mass disorders is conditioned by the increase of this type of the crimes in the recent years. In order to conduct scientific research of the methods of investigation of mass disorders it is necessary to analyze the development process of the forensic knowledge on the investigation of mass disorders.

The author examines the development process of the forensic knowledge on the investigation of mass disorders since the 90s of the last century to the present days. The practice shows that the omissions and shortcomings of the investigation of the discussed crime are caused by the lack of mass disorders investigation methods.

Key words: *mass disorders, investigation, method, operative-investigative group, state of emergency*

**ՎԿԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ դատական օրենսգրքի 7 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետև՝ ՀՀ քր. դատ. օր.) 2006 թվականի հունիսի 21-ին ՀՕ-104-Ն օրենքով կատարված փոփոխություններով վկային իրավունք վերապահվեց քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալ փաստաբանի հետ: Դրա հետ մեկտեղ, ՀՀ քր. դատ. օր.-ի 206 հոդվածում ամրագրվեց նորմ. «Վկայի փաստաբանը մասնակցում է հարցաքննությանը՝ վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով»: Այսինքն՝ վկան ևս իրավունք ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի միջոցով:

Օրենսդրական հիշյալ փոփոխությունները առաջին հերթին միտված են ապահովելու վկայի՝ որպես դատավարության մասնակցի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Մակայն նշված փոփոխությունները միանշանակ չընդունվեցին տեսական գրականության մեջ և բուռն քննարկումների առիթ դարձան, ինչպես նաև պրակտիկայում առաջացրին որոշ խնդիրներ: Մասնավորապես, մինչև օրս տեսության մեջ շարունակում են վիճահարույց մնալ վկայի փաստաբանի կարգավիճակի, նրա գործառույթների, իրավունքների և պարտականությունների շրջանակին վերաբերող հարցերը, ինչն էլ հաճախ գործնականում առաջ է բերում որոշ խնդիրներ:

Օրենսդիրը, նախատեսելով վկայի հարցաքննությանը¹ փաստաբանի մասնակցության հնարավորություն, չի սահմանում, թե ինչ դա-

¹ Հարկ է նշել, որ տեսական գրականության մեջ մի շարք դատավարագետներ արդարացիորեն գտնում են, որ փաստաբանն իրավունք ունի ոչ միայն մասնակցելու վկայի հարցաքննությանը, այլ նաև վկայի մասնակցությամբ իրականացվող այլ քննչական գործողություններին, օրինակ՝ առերեսմանը, ճամայման ներկայացնելուն, ցուցմունքները տեղում ստուգելուն և այլն (տե՛ս **Сапов Е. Ю.** Участие адвоката-представителя свидетеля при производстве допроса и других следственных действиях, направленных на получение показаний // Вестник Самарского Государственного Университета. № 5 (79), 2010, էջ 263-269):

տավարական կարգավիճակով է վերջինս մասնակցում հարցաքննությանը: Նշված հարցի կապակցությամբ միասնական մոտեցում չկա նաև մասնագիտական գրականության մեջ: Այսպես, տեսակետներից մեկի համաձայն՝ փաստաբանը, ով քննչական գործողությունների ընթացքում իրավաբանական օգնություն է ցույց տալիս վկային, նրա ներկայացուցիչն է²:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծության հիման վրա նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը *2010 թվականի նոյեմբերի 5-ին կայացված թիվ ԵԿԴ/0059/11/10 գործով որոշմամբ*, որում մասնավորապես արձանագրել է. «Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել փաստաբան Սիրանուշ Սահակյանին դատական նիստում հանդես գալ **որպես ներկայացուցիչ** այն պատճառաբանությամբ, որ վերջինս քրեական գործով ներգրավված չի եղել որպես ներկայացուցիչ: Առաջին ատյանի դատարանը իրավասու չէր չթույլատրել **վկայի ներկայացուցչին** մասնակցելու դատական նիստին: Դատական նիստին ներկայացուցչի մասնակցությունն արգելելով՝ առաջին ատյանի դատարանը խախտել է օրենքով երաշխավորված՝ ներկայացուցչի կամ փաստաբանի միջոցով արդյունավետ պաշտպանություն իրականացնելու և իր շահերը ներկայացնելու՝ Ս. Ստեփանյանի իրավունքը»³:

Նշվածով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի խախտում:

Ի հակադրություն ներկայացված մոտեցումների՝ Վ. Ա. Մեմենցովը գտնում է, որ վկայի փաստաբանը չի կարող հանդես գալ ներկայացուցչի դատավարական կարգավիճակով առնվազն երեք պատճառով.

1) քրեական դատավարության օրենսգրքը նրան չի դիտում դատավարական գործունեության ինքնուրույն մասնակից, ինչը պայմանավորված է վկայի իրավունքների անձնական բնույթով,

2) վկայի փաստաբանին վերապահված չեն այնպիսի իրավունքներ (ի տարբերություն ներկայացուցչի), ինչ վկային,

3) վկայի փաստաբանի լիազորությունները սահմանելիս օրենսդիրը ելնում է ոչ թե ներկայացուցչի, այլ պաշտպանի իրավունքներից⁴:

Գրականության մեջ տեղ գտած մեկ այլ մոտեցման համաձայն՝ փաստաբանը, ով հրավիրվել է վկային իրավաբանական օգնություն

² Տե՛ս **Авдеев В., Воскобойник И.** Проблемы деятельности адвоката при производстве следственных действий с участием свидетеля // "Уголовное право", 2006, № 5, էջ 42, **Сапов Е. Ю.**, նշվ. աշխ., էջ52:

³ «ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու», 2010 թվականի 2-րդ կիսամյակ, 2011 թվական, Եր., 2012, էջ 274-275:

⁴ Տե՛ս **Семенцов В. А.** Избранные статьи по уголовному процессу. Краснодар, 2013, էջ 36:

ցույց տալու, իրավունքի բնագավառի մասնագետ է: Նշված մոտեցմանը դժվար է համաձայնվել, քանի որ մասնագետի հիմնական գործառույթը քրեական դատավարությունում հետաքննության մարմնին, քննիչին գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառում մասնագիտական օժանդակություն ցույց տալն է, մինչդեռ փաստաբանը մասնակցում է քննչական գործողություններին վկային իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով:

Ա. Վ. Ջակոմոլինը առաջարկում է վկայի փաստաբանին ճանաչել որպես քրեական դատավարության ինքնուրույն մասնակից և առանձին ամրագրել նրա դատավարական կարգավիճակը⁵:

Այս առումով Ն. Ռ. Մոլիսոլինովան նշում է. «ՌԴ քր. դատ. օր.-ի 5 հոդվածի 46-րդ և 47-րդ կետերում սահմանված են «մեղադրանքի կողմ» և «պաշտպանության կողմ» հասկացությունները, ինչպես նաև դատավարության այն մասնակիցները, որոնք իրականացնում են այդ գործառույթները, որոնց թվում, սակայն, նախատեսված չէ վկայի փաստաբանը, հետևաբար նա չի իրականացնում ոչ մեղադրանքի և ոչ էլ պաշտպանության գործառույթ: Քանի որ վկան քրեական դատավարության այլ մասնակից է, իսկ փաստաբանը ապահովում է նրա շահերի պաշտպանությունը, ուստի անհրաժեշտ է վկայի փաստաբանին դիտել որպես քրեական դատավարության ինքնուրույն մասնակից»⁶:***

Համանման դիրքորոշում է հայտնել նաև Ն. Ս. Ամելկովը՝ նշելով, որ անհրաժեշտ է ՌԴ քր. դատ. օր.-ում վկայի փաստաբանի դատավարական կարգավիճակը ամրագրել առանձին հոդվածում՝ նրան վերապահելով մի շարք իրավունքներ և պարտականություններ⁷:

Վերը նշված հեղինակների ներկայացրած մոտեցումն են որդեգրել որոշ երկրներ՝ իրենց քրեադատավարական օրենսգրքերում առանձին հոդվածի ձևով ամրագրելով վկայի փաստաբանի դատավարական կարգավիճակը: Այսպես, Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց շարքում առանձին ամրագրել է վկայի փաստաբանի դատավարական կարգավիճակը (գլուխ 4): Համաձայն այդ երկրի քրեական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի՝ որպես վկա կանչված անձը իրավունք ունի ներկայանալ փաստաբանի հետ, ով քրեական հետապնդման մարմնում ներկայացնում է նրա շահերը և ապահովում է նրա մասնակցությունը դատավարական գործողություններին:

⁵ St' u **Закомолдин А. В.** Квалифицированная юридическая помощь в системе гарантий прав личности в уголовном судопроизводстве. Самара, 2009, էջ 63:

⁶ **Мухудинова Н. Р.** Адвокат свидетеля, законный представитель несовершеннолетнего свидетеля в российском уголовном судопроизводстве // "Адвокатская практика", 2010, № 6, с. 43-44.

⁷ St' u **Амельков Н. С.** Оказание квалифицированной юридической помощи заявителю в уголовном судопроизводстве. Дисс. канд. юрид. наук. М., 2014, էջ 143-144:

Ըստ մեջբերված հոդվածի՝ վկայի փաստաբանն իրավունք ունի՝ 1) իմանալ, թե որ քրեական գործով է կանչվել իր վկայի ներկայացուցիչը, 2) ամբողջ ժամանակահատվածում ներկա գտնվել իր վկայի ներկայացուցչի մասնակցությամբ կատարվող դատավարական գործողություններին, 3) օրենքով սահմանված կարգով բացարկ հայտնել իր վկայի ներկայացուցչի հարցաքննությանը մասնակցող թարգմանչին, 4) հարուցել միջնորդություններ, 5) վկային պարզաբանել նրա իրավունքները և դատավարական գործողություններ իրականացնող անձի ուշադրությունը հրավիրել օրենքի խախտումների վրա, 6) վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ հարցեր տալ վկային, 7) վարույթն իրականացնող մարմնի գործողությունների կապակցությամբ անել հայտարարություններ և պահանջել, որ դրանք մտցվեն համապատասխան դատավարական գործողության արձանագրության մեջ, 8) ծանոթանալ իր վկայի ներկայացուցչի մասնակցությամբ կատարված դատավարական գործողության արձանագրությանը և պահանջել դրանում կատարել փոփոխություններ և լրացումներ⁸:

Համանման ճանապարհով է գնացել նաև Ադրբեյջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը՝ առանձին ամրագրելով վկայի ներկայացուցչի դատավարական կարգավիճակը (հոդված 105):

Կարծում ենք, որ այս առումով ճիշտ մոտեցում են որդեգրել վերը նշված երկրները՝ քրեական դատավարության օրենսգրքերում՝ առանձին կարգավորելով վկայի փաստաբանի դատավարական կարգավիճակի հետ կապված հարցերը: ՀՀ գործող քրեադատավարական օրենսգիրքը վկայի փաստաբանին չի նախատեսել որպես քրեական դատավարության մասնակից, սակայն նրան օժտել է որոշակի լիազորություններով: Այդպիսի կարգավորումը հակասում է համընդհանուր ճանաչում ստացած այն մոտեցմանը, համաձայն որի՝ քրեական դատավարության սուբյեկտի կարգավիճակը պետք է նախատեսված լինի օրենքով: Օրենսդրական նման մոտեցումը որոշ դատավարագետների հիմք է տալիս դատողություններ անելու այն մասին, որ փաստաբանը, որը ներկայացնում է վկայի շահերը, քրեական դատավարության մասնակից չէ⁹:

Խոսելով վկայի փաստաբանի դատավարական կարգավիճակի մասին՝ անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչ նպատակ է հետապնդում փաստաբանի մասնակցությունը վկայի հարցաքննությանը և ինչ գործառույթներ է իրականացնում նա: Այսպես, Մ. Վ. Կուչուգուրայի կարծիքով՝ քրեական դատավարությունում վկայի փաստաբանի մասնակ-

⁸ Ст'я «УПК Республики Молдовы» № 122 от 14.03.2003 // URL: <http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=326970&lang=2> (11.07.2015)

⁹ Ст'я u **Авдеев В., Воскобойник И.**, նշվ. աշխ.:

ցության հիմնական նպատակը վկային իրավաբանական օգնություն ցույց տալն է¹⁰:

Ս. Ա. Շեյֆերը գտնում է, որ փաստաբանի մասնակցությունը վկայի հարցաքննությանը նպատակ ունի բացառելու հարցաքննության ընթացքում հարցաքննողի ապօրինի գործողությունները¹¹:

Դ. Տ. Արաբուլիի կարծիքով՝ վկայի փաստաբանը քրեական դատավարությունում իրականացնում է իրավական ուղեկցման (сопровождения) գործառույթ¹²:

Վ. Ս. Տիտովը առանձնացնում է վկայի փաստաբան-ներկայացուցչի կողմից իրականացվող չորս գործառույթ. ա) պաշտպանություն, այսինքն՝ վկայի իրավունքների և շահերի պաշտպանություն, բ) խորհրդատվություն, այսինքն՝ վկային պարզաբանել իր իրավունքները և պարտականությունները, գ) ապահովող, այսինքն՝ ապահովել վկայի իրավունքների պահպանումը, դ) նախազգուշական, այսինքն՝ նախազգուշացնում է իր վստահորդին քրեական հետապնդման ենթարկվելու մասին¹³:

Հարցաքննությանը վկայի փաստաբանի մասնակցությունը անկասկած ապահովում է, որ հարցաքննությունը իրականացվի օրենքով սահմանված կարգով: Սակայն, մյուս կողմից, չի կարելի չնկատել, որ վկայի փաստաբանի գլխավոր և միակ խնդիրը հարցաքննության ընթացքում վկային իրավաբանական օգնություն ցույց տալն է: Այդպիսի մոտեցումը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206 հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից, համաձայն որի՝ «Եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, որը հրավիրվում է վկայի կողմից՝ ***վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով (...)***»:

Քննչական պրակտիկայում հաճախ վիճահարույց է այն հարցը, թե միևնույն քրեական գործով մեղադրյալի պաշտպանը կարող է արդյոք միաժամանակ լինել վկայի փաստաբան և մասնակցել նրա հարցաքննությանը: Կանխավ նշենք, որ այս առումով անմիջական արգելք ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Միաժամանակ կարծում ենք, որ քննիչը, դատարանը իրավունք ունեն թույլ չտալու կասկածյալի, մեղադրյալի պաշտպանին որպես փաստաբան մաս-

¹⁰ Տե՛ս Կучугура М. В. К вопросу об адвокате свидетеля // "Вестник ТомГУ", 2003, № 4, էջ 41:

¹¹ Տե՛ս Шейфер С. А. Обновление правовой регламентации доказывания по УПК РФ: шаг вперед? // "Государство и право", 2004, № 12, էջ 35-42:

¹² Տե՛ս Арабули Д. Т. Проблемы оказания адвокатом юридической помощи в уголовном процессе // "Проблемы права", 2003, № 1, էջ 172, նաև՝ Чувашова Н. С. Вопросы участия адвоката свидетеля в судебном заседании // "Федеральное законодательство об адвокатуре". Материалы междунар. науч.-практ. конф. Екатеринбург, 2004, էջ 288:

¹³ Տե՛ս Титов В. С. Адвокат свидетеля как участник уголовного процесса // "Юридический аналитический журнал", 2006, № 2, էջ 112-116:

նակցել վկայի հարցաքննությանը, քանի որ պաշտպանության գործառույթի համատեղումը վկայի շահերի ներկայացման հետ կարող է հանգեցնել նրան, որ փաստաբանը չարաշահի իր իրավունքները: Հնարավոր են իրավիճակներ, երբ պաշտպանը, ներկայացնելով կասկածյալի, մեղադրյալի շահերը, վկայի հարցաքննության ընթացքում կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա վրա՝ այն նպատակով, որ վերջինս քիչ թե շատ ընդունելի ցուցմունքներ տա պաշտպանության կողմի համար: Այլ խոսքով՝ պաշտպանը անձ է, ով քրեական գործի ելքով ունի դատավարական շահ: Վկայի փաստաբանը չի կարող ունենալ այդպիսի շահ, քանի որ նրա գործունեությունը բացառապես ուղղված է վկային իրավաբանական օգնություն ցույց տալուն, նույնիսկ եթե այդ վկան պաշտպանության կողմից է:

Գործնականում հանդիպող նշված հիմնախնդրի լուծմանը միտված կարևոր ձեռքբերում կարելի է համարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետև՝ Նախագիծ) «Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը» վերտառությամբ սկզբունքի ամրագրումը, համաձայն որի՝ վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին:

Իրավունքների չարաշահում թույլ տված կամ պարտականությունները չարամտորեն չկատարած անձի նկատմամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը:

Քննչական պրակտիկայում տեղ գտած վերը նշված դեպքերը բացառելու համար առաջարկվում է մինչև քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը գործող օրենսգրքում ամրագրել հետևյալ նորմը. **«Քննիչն իրավունք ունի մեղադրյալի պաշտպանին թույլ չտալու միննույն քրեական գործով հանդես գալ վկայի ներկայացուցիչ և մասնակցել վկայի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողություններին»:**

Անդրադառնալով վկայի փաստաբանի իրավունքներին և պարտականություններին՝ պետք է նշել, որ դրանք ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 206 հոդվածի 6-րդ մասում («Վկայի հարցաքննությունը»), համաձայն որի՝ փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն **իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները:** Քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված՝ վկայի իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարե-

լու դեպքերում **փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ**, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

Քննչական պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ հարցաքննության ներկայացած վկան միջնորդում է հետաձգել այն՝ հարցաքննությանը փաստաբանի հետ ներկայանալու նպատակով, որը հիմնականում քննիչների կողմից բավարարվում է: Կարծում ենք, որ քննիչը իրավունք ունի չհետաձգելու հարցաքննությունը, եթե փաստաբանի հետ հարցաքննության ներկայանալու իրավունքի վերաբերյալ պատշաճ ծանուցված վկան¹⁴ քննչական գործողությանը չի ներկայանում փաստաբանի հետ և այդ պատճառով միջնորդում է հետաձգել այն: Այս տեսանկյունից իրավացիորեն Նախագծի 225 հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունը»:

Կամ՝ պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ վկայի և տուժողի առերեսման ընթացքում վկան միջնորդում է քննիչին հետաձգել առերես հարցաքննությունը՝ իր փաստաբանի հետ մասնավոր զրույց ունենալու համար: Քննիչը բավարարում է միջնորդությունը և մոտ 25 րոպե հետաձգում առերեսումը, որպեսզի վկան կոնֆիդենցիալ խորհրդակցի իր փաստաբանի հետ:

Հարկ է նշել, որ այս պրակտիկան ևս չի բխում ՀՀ քր. դատ. օր.-ի 206 հոդվածի պահանջներից, քանի որ օրենսդիրը վկայի հարցաքննությունը սկսելուց հետո վկայի համար փաստաբանի հետ առանձին խորհրդակցելու կարգ չի նախատեսում, հետևաբար փաստաբանի միջնորդությունը պետք է մերժվի:

Միաժամանակ պետք է փաստել, որ ներկայիս օրենսդրական կարգավորումները բավարար չեն քրեական դատավարության ընթացքում վկայի իրավունքների օրինական շահերի արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծում այս տեսանկյունից առաջընթաց քայլ է արձանագրվել: Այսպես, Նախագծի 225 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վկան հարցաքննության է ներկայացել

¹⁴ ՀՀ քր. դատ. օր.-ի 205 հոդվածը, որ կարգավորում է դատավարության մի շարք մասնակիցներին, այդ թվում նաև՝ վկային հարցաքննության կանչելու կարգը, միայն սահմանում է, որ ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները: Որպեսզի իրապես ապահովվի փաստաբանի հետ հարցաքննության ներկայանալու վկայի իրավունքը, անհրաժեշտ է նշված հոդվածը լրացնել հետևյալ նորմով. «Վկայի հարցաքննության արձանագրությունում նշվում է նաև հարցաքննությանը փաստաբանի հետ ներկայանալու նրա իրավունքը»:

փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի մասնակցելու հարցաքննությանը և **քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու վկային նրա կարգավիճակին վերաբերող հարցերով**: Փաստաբանը վկային հարցեր է տալիս միայն քննիչի թույլտվությամբ և իրավունք չունի մեկնաբանելու նրա պատասխանները: Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վկայի իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքերում փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

Գործող քրեադատավարական օրենսգրքի համեմատությամբ՝ վկայի փաստաբանի համար ավելի լայն իրավունքներ է նախատեսել նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքը, որի 189 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քննչական գործողությանը մասնակցող վկայի փաստաբանը իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, իր վստահորդին տրամադրելու կարճատև խորհրդատվություն, քննիչի թույլտվությամբ հարցաքննվող անձին հարցեր տալու, ծանոթանալու հարցաքննության արձանագրությանը և միջնորդություն ներկայացնելու դրանում լրացումներ կատարելու վերաբերյալ:

Որոշ դատավարագետներ գտնում են, որ ՌԴ քր. դատ. օր.-ում վկայի փաստաբանին վերապահված լիազորությունները բավարար չեն քրեական դատավարության ընթացքում նրա շահերը արդյունավետ ներկայացնելու համար և առաջարկում են դրանք ընդլայնել: Այսպես, Ն. Ռ. Մուխոմոխովան առաջարկում է վկայի փաստաբանին իրավունք վերապահել բացարկ հայտնելու, միջնորդություններ և բողոք ներկայացնելու¹⁵:

Ա. Ն. Իվանովը և Ե. Ս. Լապինը առաջարկում են վկայի փաստաբանին իրավունք վերապահել հարուցելու միջնորդություններ՝ կապված վկայի իրավունքների և օրինական շահերի խախտման հետ, վկայի անունից կազմելու գրավոր փաստաթղթեր (բողոք, միջնորդություն), վկայի նկատմամբ անվտանգության միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու, բողոքարկելու քննիչի, հետաքննիչի, դատախազի, դատարանի գործողությունները (անգործությունը) և դատարանում մասնակցելու դրանց քննարկմանը¹⁶:

Ն. Ս. Ամելկովը առաջարկում է ընդլայնել վկայի փաստաբանի լիազորությունները՝ նրան վերապահելով վկային կարճատև խորհրդատվություն տալու, վկայի մասնակցությամբ կատարվող բոլոր քննչական գործողություններին մասնակցելու, վկային հարցեր տալու, վկայի մաս-

¹⁵ Տե՛ս **Мухудинова Н. Р.** Обеспечение конституционного права каждого на получение квалифицированной юридической помощи в российском уголовном процессе: дис. ... канд. юрид. наук. Ижевск, 2005, էջ 186-187:

¹⁶ Տե՛ս **Иванов А. Н., Лапин Е. С.** УПК РФ: нужны коррективы // "Государство и право", 2009, էջ 22:

նակցությամբ կատարված բոլոր քննչական գործողությունների արձանագրություններին ծանոթանալու և դրանցում առկա գրառումների լրիվության ու ճշգրտության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու, միջնորդություններ ներկայացնելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները բողոքարկելու լիազորություններ¹⁷:

Վկայի փաստաբանի լիազորությունների ընդլայնումը, անխոս, նրան վերածում է քննչական գործողության ակտիվ մասնակցի՝ հնարավորություն տալով կանխելու անօրինական ճնշումը հարցաքննվողի նկատմամբ¹⁸:

Ա. Վ. Չակոմովը գտնում է, որ նպատակահարմար չէ վկայի փաստաբանին տալ որոշակի դատավարական ինքնուրույնություն (հարուցել միջնորդություններ, բողոքարկել հետաքննիչի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները (անգործությունը), քանի որ այդ իրավունքները վերապահված են նաև վկային, իսկ փաստաբանի վկան նշված դեպքում իրականացնում է իրավական ուղեկցման (сопровождения) գործառույթ¹⁹:

Այսպիսով, մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տեսակետների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Նախագծի, ինչպես նաև այլ երկրների քրեադատավարական օրենսգրքերի համապատասխան նորմերի ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Վկայի փաստաբանը քրեական դատավարության ինքնուրույն մասնակից է, հետևաբար անհրաժեշտ է նրա դատավարական կարգավիճակը մանրամասն ամրագրել օրենքով:

2. Միննույն քրեական գործով պաշտպանության գործառույթի համատեղումը վկայի շահերի ներկայացման հետ կարող է հանգեցնել փաստաբանի իրավունքների չարաշահման: Նմանատիպ դեպքերը պրակտիկայում բացառելու համար մինչև նոր օրենսգրքի ընդունումը, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վկայի փաստաբանի համար սահմանված լիազորությունները բավարար չեն նրա իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար: Այս առումով որոշակի առաջընթաց քայլ է արձանագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որում ամրագրված դրույթները միտված են ապահովելու վկայի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

¹⁷ Տե՛ս **Амельков Н. С.**, նշվ. աշխ., էջ 146:

¹⁸ Տե՛ս **Шейфер С. А.**, նշվ. աշխ., էջ 37:

¹⁹ Տե՛ս **Закомолдин А. В.** Проблемы оказания квалифицированной юридической помощи в уголовном процессе России. М., 2009, էջ 88:

Բանալի բառեր – վկա, փաստաբան, ներկայացուցիչ, քննչական գործողություն, իրավունք, օրինական շահ, իրավաբանական օգնություն, դատավարական գործառնություն

АРСЕН МАРТИРОСЯН – Статус адвоката свидетеля в уголовном процессе РА. – Адвокат свидетеля обладает процессуальным статусом, о котором трактует ряд норм уголовно-процессуального кодекса. Их изучению, а также применению данных норм на практике и посвящена статья. В ней проанализированы не только названные нормы, но и проект УПК Армении, уголовно-процессуальные кодексы некоторых зарубежных стран, а также теоретическая литература и соответствующая практика. В заключение говорится о необходимости законодательно урегулировать правовой статус адвоката свидетеля и преодолеть ряд проблем, возникающих на практике.

Ключевые слова: свидетель, адвокат, представитель, следственное действие, право, законный интерес, юридическая помощь, процессуальная функция, процессуальный статус

ARSEN MARTIROSYAN – Status of the Witness Advocate in the Criminal Proceedings in the RA. – The article focuses on analyzing the norms of the RA Code of Criminal Procedure on the procedural status of the witness' advocate and revealing some issues in the area of those provisions' application. In order to reveal the real situation in regard the highlighted issue, the author has analyzed the provisions of the RA Code of Criminal Procedure, the new draft Code of RA Criminal Procedure, codes of Criminal Procedure of several foreign countries, as well as theoretical literature and the practice. As a result the author has made reasonable conclusions and suggestions aimed to the clear legislative regulation of the legal status of the discussed subject, as well as to overcoming a number of practical problems in this regard.

Key words: witness, advocate, assignee, investigatory action, right, legitimated interest, legal aid, procedural function, procedural status

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԱՐՔԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՉՅԱՆ

Կյանքի և առողջության իրավունքը՝ քաղաքացիների, իսկ սեփականության իրավունքը՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հիմնական իրավունքներ են: Մարդկության զարգացման ողջ ընթացքում մարդու գործունեության հիմնական նպատակը եղել է այս արժեքների անվտանգության ապահովումը, վնաս պատճառելու համար իրավական պատասխանատվություն նախատեսելով՝ ոտնձգություններից դրանց պաշտպանելը: Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների առանձնահատուկ բնույթը պայմանավորում է նաև դրանց առաջացման առանձնահատուկ պայմանների անհրաժեշտություն:

Իրավաբանական գրականության մեջ որպես պատճառված վնասի համար պատասխանատվության հիմք դիտվում են հետևյալ չորս հանգամանքները՝ վնասի առկայությունը, վնաս պատճառողի գործողությունների հակաիրավական բնույթը, վնաս պատճառողի գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը և վնաս պատճառողի մեղքի առկայությունը: Սրանցից առաջին երեքը ունեն օբյեկտիվ, իսկ վերջինը՝ սուբյեկտիվ բնույթ¹:

Վնաս պատճառելու համար պատասխանատվության այս պայմաններն իրավական ուսումնասիրության կարիք են զգում, սակայն դրանց թվում, մեր կարծիքով, հատուկ քննության է արժանի վնաս պատճառողի գործողությունների հակաիրավությունը: Հակաիրավական է համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է իրավական ակտի նորմերը, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը²:

Գործողությունը անձի նպատակադրված և կամային ակտիվ արարքն է, որի հետևանքով կարող են խախտվել սեփականության, ինչպես նաև կյանքի կամ առողջության իրավունքները: Կան գործողություններ, որոնք ունեն հակաիրավական հատկանիշներ, բայց պատասխանատվություն չեն առաջացնում. օրինակ՝ եթե վնասը պատճառվի

¹Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երրորդ մաս, Եր., 2001, էջ 13:

² Տե՛ս <http://www.bibliotekar.ru/kodex-grazhdanskiy/61.htm>, <http://stgkrf.ru/1064>

անհրաժեշտ պաշտպանության սահմաններում (ՀՀ քաղ. օր., հ. 1060) կամ տուժողի խնդրանքով (ՀՀ քաղ. օր., հ. 1058, մաս 4): Սակայն պետք է նշել, որ եթե վնաս պատճառելու ժամանակ անձը անցել է անհրաժեշտ պաշտպանության սահմանները, ապա վնասի հատուցումը չի կարող մերժվել (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև):

Վնասը կարող է պատճառվել նաև անգործությամբ: Անգործությունը համարվում է հակաիրավական, երբ գործողություն կատարելը եղել է անձի պարտականությունը, սակայն անձը զանց է առել այն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Այսպիսով, ինչպես երևում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածից, որպեսզի քաղաքացին պատասխանատվություն կրի պատճառված վնասի համար, անհրաժեշտ է, որ վնասը պատճառված լինի նրա կողմից: Սակայն հոդվածը միանշանակ չի բացահայտում, թե վնասի հատուցման ինչ պայմաններ են անհրաժեշտ: Հոդվածի իրավակարգավորումը հստակեցնելու համար առաջարկում ենք ՀՀ քաղ. օր.-ի 1058 հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն անձի կողմից, որի մեղքով և ապօրինի գործողություններով պատճառվել է այդ վնասը»:** Անշուշտ, տարակարծությունների տեղիք չի տալիս այն հանգամանքը, երբ քաղաքացին պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով պատճառված վնասի համար, օրինակ՝ մեքենան վարելիս բախվում է մեկ այլ մեքենայի: Սակայն, մեր կարծիքով, վիճելի է այն հարցը, թե արդյոք քաղաքացին ենթակա է պատասխանատվության, երբ վնասը պատճառվել է վերջինիս անգործության հետևանքով. օրինակ՝ տեսնելով, որ անձը խեղդվում է լճում, ավիում գտնվող քաղաքացին չի փորձում օգնել վերջինիս, օգնություն չի կանչում, և խեղդվողը մահանում է: Արդյո՞ք մահացածի իրավահաջորդները իրավունք կունենան վնասի հատուցում պահանջելու այն անձից, ով, գտնվելով լճափին, կարող էր կատարել գործողություններ, որոնք կփրկեին խեղդվողին, սակայն չի կատարել: Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, որ գործողություն ասելով պետք է հասկանալ նաև անգործությունը, ուստի անիմաստ է լրացուցիչ ուսումնասիրել գործողության և անգործության տարբերությունը կամ անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցումը³:

³ Տե՛ս **Peter Cane**, *The Anatomy of Tort Law*, Hart Publishing, Oxford, 1997, էջ 63:

Խնդիրը ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու և արդյունավետ քննարկելու համար կցանկանայինք անգործության հետևանքով առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը քննարկելիս հատկապես ուշադրություն դարձնել այն անձանց, ովքեր ի պաշտոնե կամ աշխատանքի բնույթից ելնելով պարտավոր են կատարել գործողություններ՝ ուղղված վնասի կանխմանը:

Քանի որ այս խմբի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սերտորեն կապված է դրանցում ընդգրկված անձանց անգործության և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայության կամ բացակայության հետ, կցանկանայինք անդրադառնալ պատճառական կապին՝ որպես անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության անհրաժեշտ պայմանի: Իրավաբանական գրականության մեջ անգործության հետևանքով առաջացած վնասի և անգործության ու վնասի միջև առկա պատճառական կապի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հեղինակների մի մասի կարծիքով, մեկի կողմից մյուսին չօգնելը ինքնին վնասի պատճառում է, և այս դեպքում առկա է պատճառական կապ անգործության ու պատճառված վնասի միջև, ուստի անգործության հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության առանձնահատուկ ուսումնասիրության կարիք չկա, քանզի սա ուղղակի վնասի պատճառման ինքնուրույն տարատեսակ է: Իրավաբան գիտնականների մեկ այլ խմբի կարծիքով՝ անգործության հետևանքով առաջացած վնասը ինքին չի ենթադրում, որ այն պատճառվել է անգործության հետևանքով, և նույնիսկ եթե անձի պարտականությունն է մեկ ուրիշին փրկելը, և նա չի կատարում իր պարտականությունը, դա դեռ չի նշանակում, որ այդ անձը պետք է ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության⁴:

Ի լրումն վերոնշյալ երկու տեսակետների՝ գտնում ենք, որ ամեն դեպքում անգործության հետևանքով առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը քննարկելիս անպայման պետք է ուշադրություն դարձնել հատկապես պատճառական կապին, քանզի, մեր կարծիքով, քննարկվող հարաբերությունների ժամանակ հենց պատճառական կապն է այն անհրաժեշտ պայմանը, որը կարող է պատասխանատվության հիմք դառնալ անգործություն դրսևորած քաղաքացու համար: Նշված ենթատեքստում պատճառական կապի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ անգործության և վնասի միջև պատճառական կապի հիմնավորումը ավելի դժվար է, քան գործողության և վնասի միջև այդ կապի առկայության հիմնավորումը: Իսկ

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս **Michael D. Bayles and Bruce Charman** Justice, Rights and Tort Law, D. Reidel Publishing Company Dordrecht/Boston 1983, էջ 216-217, **H. L. A. Hart and A. M. Honore**, Causation in the Law. Oxford, Clarendon Press, 1959, էջ 61-62:

իրավաբանական գրականությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ վնասի և արարքի միջև պատճառական կապը պետք է լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պատասխանատվության պայման դառնալ⁵: Այսպիսով ակնհայտ է, որպեսզի անգործություն դրսևորած անձը ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին վնասը պատճառված լինի անմիջապես այդ անձի անգործության հետևանքով⁶:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, մեր կարծիքով, միայն անգործության և պատճառական կապի առկայությունը բավարար չէ անգործության հետևանքով ծագած վնասի հատուցման պարտավորություններ առաջանալու համար: Քննարկվող հարաբերություններում, ինչպես ցանկացած արտապայմանագրային պարտավորության առաջացման դեպքում, կարևորվում է նաև մեղքի առկայությունը: Այսինքն՝ որքանով է անձը գիտակցել, որ իր անգործության հետևանքով մեկ ուրիշին կարող է վնաս պատճառվել: Բացի այդ, եթե գիտակցել է, ապա արդյոք հնարավորություն ունեցել է իր գործողություններով կանխել վնասի պատճառումը:

Անգործությամբ վնաս պատճառող անձանց թվին կարելի է դասել մասնագիտական այնպիսի աշխատանք կատարողներին, ինչպիսիք են ոստիկանները, հրշեջները, փրկարարները, բժիշկները և այլք: Վերջիններս կոչված են իրենց գործողություններով պաշտպանելու քաղաքացիների կյանքը և առողջությունը, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը: Ոստիկանական մարմինները, հրշեջ կամ փրկարար ծառայությունները ֆինանսավորվում են հարկատուների հաշվին, այսինքն՝ քաղաքացիները վճարում են վերջիններիս իրենց անվտանգության համար: Այս մարմինների աշխատակիցները, ընդունվելով աշխատանքի, գիտակցում են դրա վտանգավորությունը, ուստի նրանց կողմից անգործությունը, այսինքն՝ իրենց առջև դրված պարտականությունների չկատարումը, անշուշտ, պետք է դիտել որպես վնաս առաջացնող գործոն, և վնասի հատուցման պարտականությունը դնել այդ մարմինների վրա: Հատկանշական է, որ նմանատիպ կարծիք արտահայտվել է նաև արևմտաեվրոպական իրավաբանական գրականության մեջ⁷: ՀՀ քաղ. օր.-ը պատասխանատվություն է նախատեսում պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երրորդ մաս, Եր., 2001, էջ 608, նաև՝ «Гражданское право, обязательственное право», М., էջ 613:

⁶ Այս մասին մանրամասն տե՛ս **B. S. Markesinis and S. F. Deakin**, Tort Law, Third Edition, Clarendon Press, Oxford, 1994, էջ 163-192:

⁷ Տե՛ս **Michael D. Bayles and Bruce Charman**, նշվ. աշխ., էջ 214:

(հողված 1063): Անշուշտ, ուստիկանությունը, հրշեջ մարմինները, համաձայն ՀՀ օրենսդրության, դասվում են պետական մարմինների թվին, ուստի հողվածը կարգավորում է այս անձանց անգործության հետևանքով քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի պատասխանատվության հարցը, որը պետք է կրի Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Սակայն, մեր կարծիքով, բաց է մնում փրկարարների և բուժօգնականների պատասխանատվության հարցը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կան բազմաթիվ մասնավոր բուժօգնականներ, իսկ նախկինում պետական համարվող բուժօգնականները այժմ բաժնետիրական ընկերություններ են, ուստի և՛ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ: Անշուշտ, կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետությունում փրկարարական ծառայությունները նույնպես գտնվում են պետական համակարգում, ուստի այս մարմինների աշխատակիցների անգործության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման Քաղ. օր. 1063 հողվածի կանոններով: Սակայն չկարգավորված է մնում մասնավոր փրկարարական կազմակերպությունների (որպես օրինակ կարելի է նշել Սևանի ավազանում, Ջրաշխարհում և այլուր գործող փրկարարներին) աշխատակիցների անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցումը: Այս խումբ սուբյեկտների անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցումը կարող է կատարվել երկու տարբերակով.

ա) տուժողների և այս սուբյեկտների միջև առկա են պայմանագրային հարաբերություններ: Օրինակ, քաղաքացին, գնալով «Ջրաշխարհ» և գնելով մուտքի տոմս, այդ ընկերության հետ մտնում է քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների մեջ, և ծառայություն մատուցող կազմակերպության պարտականությունն է ապահովել քաղաքացու անվտանգությունը: Ուստի եթե փրկարարի անգործության պատճառով քաղաքացուն վնաս պատճառվի, կարող են կիրառվել պայմանագրի չկատարման հետևանքով պատասխանատվության քաղաքացիաիրավական նորմերը: Նույնը կարելի է ասել նաև բուժօգնականների մասին:

բ) Գործում է իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար իրավաբանական անձի պատասխանատվության դրույթը՝ Քաղ. օր., հողված 1062: Նույն մոտեցումը կարող է կիրառվել նաև բուժօգնականների աշխատակիցների կողմից պատճառված վնասի դեպքում:

Խոսելով հակաօրինական գործողության կամ անգործության՝ որպես պատասխանատվություն առաջացնող հիմքի մասին, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև քաղաքացիաիրավական պատասխանատվությանը այն դեպքում, երբ վնասը պատճառվել է օրինական գործողություններով, մասնավորապես՝ ծայրահեղ

անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

ՀՀ քաղ. օր.-ի 1061 հոդվածը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգի վերացման պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վերացվել այլ միջոցներով, պետք է հատուցի վնաս պատճառած անձը: Այնուհետև հոդվածը ավելացնում է, որ հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները՝ դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա՝ ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնաս հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնասը պատճառողին:

Այսպիսով, հոդվածից ակնհայտ է դառնում, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառած վնասի դեպքում քաղաքացիաիրավական հարաբերություններ են առաջանում վնաս պատճառողի և տուժողի կամ այն երրորդ անձի համար, ում շահերը պաշտպանվել են: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, ծայրահեղ անհրաժեշտության վիճակը կայուն և կրկնվող իրավաբանական հարաբերություն է, որն առաջանում է որոշակի հատկանիշների ամբողջության դեպքում, որոնց թվում առկա են ոչ միայն մեծ վնաս պատճառելու ռիսկը, այլև տարբեր վնասներ պարտադիր պատճառելու հնարավորությունը⁸: Ընդ որում, ինչպես նշում են հեղինակները, պատճառված վնասը պետք է ավելի նվազ լինի կանխվող վնասից: Քանի որ իրավական պրակտիկայում ծայրահեղ անհրաժեշտությամբ պատճառված վնասի դրույթը շատ քիչ է կիրառվում, ուստի դժվարանում է պրակտիկ օրինակներ բերելը: Սա դժվարացնում է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչ կարգով պետք է որոշվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ուրն է պարտադիր ռիսկի աստիճանը⁹:

Այս հարցին, կարծում ենք, կարող է պատասխանել կոնկրետ իրավական ակտը, որը կարգավորում է այս կամ այն աշխատողի, պաշտոնատար անձի գործունեությունը: Որպես օրինակ կարելի է նշել առողջապահության, զինծառայության, ոստիկանության մասին օրենսդրությունները և այլն: Այս նորմատիվ ակտերի հիման վրա տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ պարտավորվում են իրականացնել որոշակի ռիսկի հետ կապված գործողություններ: Ինչպես նշում են իրավագետները. «Սա հնարավորություն է տալիս պնդելու, որ զինծառայողները, ոստիկանության, հակահրդեհային պաշտպանու-

⁸ Տե՛ս նաև **Донцов С. Е., Глянец В. В.** Возмещение вреда по советскому законодательству. М., 1990, էջ 258:

⁹ Տե՛ս նույն տեղը:

թյան և մի շարք այլ կատեգորիայի աշխատողները, իրենց վրա դրված կամ կամավոր ընդունած ծառայողական, հասարակական պարտականությունների ուժով, կարևորագույն հասարակական հարաբերությունները և շահերը պաշտպանելիս չեն կարող ձեռնպահ մնալ իրենց պարտականությունները կատարելուց՝ իրենց առողջությունը կամ կյանքը փրկելու համար, և չեն կարող արդարանալ ծայրահեղ անհրաժեշտությամբ: Իրենց պարտականությունները կատարելուց խուսափելու դեպքում այս անձինք պետք է կրեն կարգապահական, հասարակական կամ քրեական պատասխանատվություն»¹⁰:

Այսպիսով, համաձայն վերոնշյալ տեսակետի, աշխատանքային պարտականությունները իրականացնելիս ծայրահեղ անհրաժեշտության վիճակ չի կարող առաջանալ այն անձանց համար, որոնց աշխատանքում առկա է ռիսկի գործոնը: Օրինակ՝ հրշեջները չեն կարող ձեռնպահ մնալ կրակը մարելուց և դրանով իսկ գույքը ոչնչացումից փրկելուց՝ հղում կատարելով այն բանին, որ իրենք վտանգում են իրենց կյանքը: Վերոնշյալ տեսակետը վիճելի է: Ճիշտ է, այս կատեգորիայի աշխատողները պարտավոր են աշխատել իրենց կյանքի համար ռիսկային պայմաններում, բայց, կարծում ենք, անհրաժեշտ են կոնկրետ նորմատիվ ակտեր, որոնք կապահովեն նաև նրանց կյանքի և առողջության պաշտպանությունը, ինչպես նաև կտարանջատեն պահանջվող ռիսկի աստիճանները:

Եթե վնասը պատճառվում է առավել վտանգի աղբյուրի տիրոջ կողմից ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ապա առաջանում է վիճելի մի իրավիճակ՝ սահմանել պատասխանատվություն և վնասի հատուցում Քաղ. օր.-ի 1072 հոդվածով, ուստի և՛ պատասխանատվություն առանց մեղքի՝, թե՛ 1061 հոդվածի հիմքերով, որը թույլ է տալիս վնասի հատուցման պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով գործել է վնաս պատճառողը, կամ էլ լրիվ կամ մասնակիորեն ազատել վնաս հասցնողին և երրորդ անձին վնասի հատուցման պարտականությունից: Դատական պրակտիկան այս հարցը լուծելիս կողմնորոշվում է հետևյալ երկու տարբերակներով.

ա) առավել վտանգի աղբյուրով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում հասցված վնասի դեպքում անհրաժեշտ է կիրառել Քաղ. օր.-ի այն հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար, քանի որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը նկատի ունի իրավաչափ վնասը:

բ) Առավել վտանգի աղբյուրով դիտավորյալ իրավաչափ վնաս հասցնելու ժամանակ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնա-

¹⁰ Նույն տեղում, էջ 259:

սի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը չի կարող կիրառվել, քանի որ դիտավորյալ վնաս պատճառելու հասկացությունը չի կարող համատեղվել առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ¹¹:

Առավել վտանգի աղբյուրի տիրոջ՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարած գործողությունների համար պատասխանատվությունը չպետք է արմատապես ազդի ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում կատարված իրավախախտման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի վրա: Առավել վտանգի աղբյուրի տերը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործում է իրավաչափ, և նրա այս կարգավիճակը չի տարբերվում մյուս վնաս պատճառողների կարգավիճակից: Այս պատճառով դատարանները կարիք չունեն պարզելու, թե արդյոք ծայրահեղ անհրաժեշտության վիճակի ծագումը կոնկրետ իրի վնասակար հատկությունների հետևանք է, թե՞ վնասը տուժողին պատճառվել է առավել վտանգի աղբյուրով և ոչ թե այլ օբյեկտով:

Ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում գործող առավել վտանգի աղբյուրի տիրոջ պատասխանատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունը պետք է արտահայտվի նրանով (ներառելով նաև պատասխանատվությունից լրիվ կամ մասնակիորեն ազատելու հնարավորությունը), որ դատարանը, նկատի ունենալով կա՛մ տուժողի մեղքը (եթե վերջինս առկա է), կա՛մ էլ այն անձի մեղքը, ում շահերից ելնելով գործել է վնաս պատճառողը, պետք է հաշվի առնի միայն այս անձանց կոպիտ անզգուշությունը կամ դիտավորությունը: Ինչպես նշում են հեղինակները, անհաղթահարելի ուժը ինքնին բացառում է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի առկայությունը, քանի որ անհաղթահարելի ուժի պայմաններում բացառվում է ցանկացած գիտակցված վնասի պատճառում¹²: Թերևս կարելի է չհամաձայնել հեղինակների վերոնշյալ կարծիքի հետ, քանի որ կյանքում հնարավոր են դեպքեր, երբ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում անհրաժեշտություն առաջանա վնաս հասցնելու մեկին կամ մի քանիսին՝ ավելի մեծ թվով անձանց կյանքը փրկելու համար: Օրինակ, եթե անտեսանելիության պայմաններում թույլատրվի ինքնաթիռի վայրէջքը մայրուղու վրա՝ դրանով իսկ վտանգելով մայրուղում երթևեկող ավտոմեքենաների ուղևորների կյանքը կամ առողջությունը:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության մասին՝ պետք է նշել, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում հասցված կարող է դիտվել միայն այն վնասը, որի պատճառմամբ կանխվել է մեկ այլ՝ շատ ավելի մեծ վնաս: Օրինակ՝ մեկ անձին կյանքից զրկելով կամ առողջությանը

¹¹ См. у Донцов С. Е., Маринина М. Я. Имущественная ответственность за вред, причиненный личности. М., 1986, էջ 46:

¹² См. у նույն տեղը:

վնաս պատճառելով կանխվել է մի քանի անձանց կյանքին կամ առողջությանը հասցվելիք վնասը կամ, որ ավելի հավանական է, գույքին վնաս պատճառելով՝ կանխվել է առողջությանը պատճառվելիք վնասը: Շատ կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ պետք է ուշադրություն դարձնել, թե արդյոք հնարավոր է եղել վնասը կանխել այլ միջոցներով: Եթե այդպիսի հնարավորություն եղել է, ապա հասցված վնասը, կարծում ենք, չի կարող դիտվել որպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված:

Ինչպես նշվեց վերը, Քաղ. օր.-ը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում պատճառված վնասը ենթակա է հատուցման վնաս պատճառած անձի կողմից: Օրենսգիրքը նաև նշում է, որ, հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները, դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնասը հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնաս պատճառողին:

Հոդվածը, ըստ էության, բավական լայն լիազորություններ է տվել դատարաններին՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով պարզելու, թե երբ պետք է պատասխանատվությունը դնել վնաս պատճառողի և երբ՝ երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով գործել է վնաս պատճառողը:

Ենթադրվում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը նկատի ունի ծայրահեղ անհրաժեշտության վիճակի առաջացման համար երրորդ անձի մեղքի առկայությունը կամ բացակայությունը, իսկ եթե առկա է մեղքը, ապա՝ դրա աստիճանը: Կարծում ենք, որ այս սուբյեկտիվ հանգամանքների կողքին դեր պիտի ունենան նաև մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, ինչպիսիք են՝ կողմերի նյութական դրությունը, վնասի պատճառման ձևը և այլն:

Կցանկանայինք նշել մի կարևոր փաստ նս. ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հասցված վնասի դեպքում վնաս է հասցվում ոչ թե վտանգավոր իրավիճակ ստեղծող անձին, այլ այն սուբյեկտներին, որոնք անմիջական կապ չունեն վտանգավոր իրավիճակի ստեղծման հետ: Եթե վնաս հասցվի վտանգավոր իրավիճակ ստեղծող սուբյեկտին, ապա մենք գործ կունենանք անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի հետ:

Անդրադառնալով ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի կիրառման միջազգային փորձին՝ կցանկանայինք նշել, որ, օրինակ, ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ ընդունվում է, որ մեկ անձին վնաս հասցնող գործողությունը, որը ավելի մեծ վնասի առաջացումը կանխելու միակ միջոցն է եղել, ո՛չ քրեական և ո՛չ էլ քաղաքա-

ցիական իրավախախտում է: Ընդհանուր սկզբունքից ելնելով՝ այս դեպքում դատական պրակտիկան խոսում է անհաղթահարելի ուժի մասին, սակայն իրականում, ինչպես գտնում է Լ. Շյուվիո դե լա Մորանդյերը, այստեղ չկա անհաղթահարելի ուժ¹³: Ընդհակառակը, ասում է հեղինակը, ծայրահեղ անհրաժեշտությունը ենթադրում է երկու որոշումներից մեկի ազատ ընտրություն՝ վնաս պատճառել ուրիշին կամ ենթարկվել անխուսափելի վտանգին: Փաստորեն, ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ նույնպես նշվում է, որ ուրիշին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում պետք է լինի ավելի մեծ վտանգից խուսափելու միակ միջոցը¹⁴:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի հատուցման մասին՝ կարևորում ենք այն հանգամանքների պարզաբանումը, որոնք կարող են պատասխանատվությունից ազատելու հիմք դառնալ: Քաղ. օր.-ի 1061 հոդվածը նշում է, որ դատարանը կարող է ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով վնաս պատճառած անձին ազատել պատասխանատվությունից և այն դնել երրորդ անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը: Միննույն ժամանակ հոդվածը ամրագրում է, որ դատարանը կարող է նաև փոքրացնել պատասխանատվության չափը ինչպես վնաս պատճառողի, այնպես էլ երրորդ անձի համար: Հոդվածը կոնկրետ չի նշում, թե որոնք են այն հանգամանքները, որ ազատում են ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառած վնասի հատուցումից: Օրենսգիրքը խոսում է միայն նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքների մասին՝ առանց որոշակիացնելու դրանք: Կարծում ենք, որ այդպիսի հանգամանքներ կարող են լինել ինչպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակին նախորդող հանգամանքները, այն կողմի գործողությունները, որոնք վնաս պատճառողի գործողությունների պատճառ են դարձել, այնպես էլ փրկվող արժեքը, այն անձինք և արժեքները, որոնց վնաս է հասցվել, և այլն:

Անդրադառնանք անհրաժեշտ պաշտպանության վիճակում վնաս պատճառելու խնդիրներին:

ՀՀ քաղ. օր.-ի 1060 հոդվածը սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները:

Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառած վնասը հատուցելուց ազատվելու կարևորագույն պայման է անհրաժեշտ պաշտպանության սահմանների պահպանումը: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, և ինչպես ամրագրված է քաղաքացիական օրենսդրությամբ, անհրաժեշտ պաշտպանության սահմանները

¹³ Տե՛ս Լ. Ջ. Դե Լա Մորանդեր. Гражданское право Франции, М., 1960, էջ 421:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

րի անցմամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման¹⁵: Այսպիսով, պարզելու համար, թե որոնք են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշները և սահմանները, անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքին:

Ինչպես ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 42 հոդվածում. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը»:

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության վիճակի պայմաններից մեկը հակաօրինական կամ հանցավոր այն արարքի կանխումն է, երբ անձի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև գույքին սպառնացող իրական վտանգ է առաջացել: Պրակտիկայում մեծ դժվարություն է առաջացնում անհրաժեշտ պաշտպանության սահմաններում գործած կոնկրետ անձին քաղաքացիաիրավական կամ քրեաիրավական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծումը, քանի որ արդեն ինքնին իրենից դժվարություն է ներկայացնում այն հանգամանքների լրիվ և բազմակողմանի բացահայտումը, որոնք կայացուցեն, որ տվյալ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Դժբախտաբար դատարանները, հաճախ գտնվելով տուժողների բարոյական ճնշման տակ, խուսափում են անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը կիրառելուց, որի հետևանքով հակաօրինական ոտնձգությունից իր կյանքը կամ առողջությունը պաշտպանող անձը, այդ ընթացքում վնաս պատճառելով ոտնձգողի առողջությանը, ստիպված է լինում փոխհատուցել այդ վնասները և նույնիսկ քրեական պատիժ կրել: Սա, մեր կարծիքով, չի բխում արդարադատության շահերից և նպատակներից: Դատարանների կողմից հստակ պետք է բացահայտվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանության՝ սահմաններում, թե՞ ոչ, և եթե՝ այո՛, ապա անձը անմիջապես պետք է ազատվի քաղաքացիաիրավական և քրեաիրավական պատասխանատվությունից:

Մյուս կողմից էլ անձը կարող է գործել իր կարծիքով անհրաժեշտ

¹⁵ См. у Майданик Л. А., Сергеева Н. Ю. Материальная ответственность за повреждение здоровья. М., 1968, էջ 86, ինչպես նաև ՀՀ քաղ. օր.-ի 1060 հոդվածը:

պաշտպանության սահմաններում, սակայն իրականում նրա գործողությունները ոչ միայն գերազանցեն անհրաժեշտ պաշտպանության սահմանները, այլև ընդհանրապես դուրս լինեն անհրաժեշտ պաշտպանությունից: Այս կապակցությամբ հարկ ենք համարում մեկ անգամ ևս նշել, որ անհրաժեշտ պաշտպանության հարցը քննարկելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյոք կանխվելիք վնասը եղել է իրական կամ, ինչպես նշում են Ս. Ե. Դոնցովն ու Վ. Վ. Գլյանցևը, արդյոք այդ գործողությունները էական վնաս են հասցրել պաշտպանվողի իրավունքներին և շահերին կամ էլ այդպիսի վնասի վտանգ են ստեղծել¹⁶: Դատական պրակտիկան և իրավունքի տեսությունը առանձնացնում են նաև անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության հարցը: Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության քրեաիրավական պայմաններից մեկն այն է, որ ոտնձգությունը պետք է հանրորեն վտանգավոր լինի: Սակայն Ս. Ե. Դոնցովն ու Վ. Վ. Գլյանցևը իրավացիորեն գտնում են, որ քաղաքացիական օրենսդրությունը չի տալիս անհրաժեշտ պաշտպանության վիճակի քաղաքացիաիրավական բնորոշումը, որը պետք է տարբերվեր քրեաիրավականից նրանով, որ քաղաքացիական իրավունքում ոտնձգողի գործողություններում հանրային վտանգավորության առկայությունը պարտադիր չէ, և բավական է միայն այդ գործողությունների հակաիրավական բնույթը¹⁷:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ինչպես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այնպես էլ անհրաժեշտ պաշտպանության դեպքում վնասը պետք է պատճառվի ավելի մեծ վնասի առաջացումը կանխելու համար: Սակայն ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության տարբերությունն այն է (որը և բացատրում է առաջին դեպքում վնասը հատուցելու պարտականությունը այն պատճառողի վրա դնելը, իսկ երկրորդի դեպքում՝ ոչ), որ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վնաս է պատճառվում հակաիրավական արարքի հետ կապ չունեցող անձին, իսկ անհրաժեշտ պաշտպանության դեպքում՝ այն անձին, ով կատարում է հակաիրավական արարքը: Վերջին դեպքում շատ կարևոր է, որ վնաս պատճառվի միայն հարձակվողին և ոչ թե այլ անձանց: Փաստորեն, օրենքը պաշտպանվողին տալիս է հարձակվողին վնաս պատճառելու իրավունք՝ պաշտպանվողի գործողությունները դարձնելով իրավաչափ:

Ինչպես նշվեց վերը, հատուցման է ենթակա այն վնասը, որը պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով: Նման դեպքում պատասխանի կարիք ունեն հետևյալ հարցերը. ո՞վ պետք է հատուցի անհրաժեշտ պաշտպանության սահմանների

¹⁶ Տե՛ս Донцов С. Е., Глянцев В. В., նշվ. աշխ., էջ 243:

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

անցումով պատճառված վնասը, ի՞նչ կարգով պետք է որոշվի վնասի հատուցման հարցը: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ չնայած վնաս է պատճառվել ոտնձգողին, սակայն այն պատճառվել է մոտավորապես վտանգը կանխելու համար, ուստի ամեն դեպքում պետք է տարանջատել և որոշել, թե վնասի որ մասն է ենթակա հատուցման, կամ արդյոք ենթակա է հատուցման ողջ պատճառված վնասը: Լ. Ա. Մայդանիկի և Ն. Յու. Սերգեևայի կարծիքով՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով պատճառված վնասի ծավալը պետք է նվազեցվի՝ հաշվի առնելով տուժողի մեղավորության աստիճանը, որը իր ազդեցիվ գործողություններով սադրել է վնաս պատճառողին դիմելու պատասխան գործողությունների¹⁸: Համաձայն ենք հեղինակների այս տեսակետի հետ և գտնում ենք, որ ճիշտ չի լինի, ինչպես նաև չի բխի արդարադատության շահերից անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ պատճառված վնասի հատուցումը ամբողջ ծավալով պատճառողի վրա դնելը: Այստեղ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն և վնասի հատուցման չափը որոշելիս հաշվի առնեն նաև հակաիրավական արարք կատարող անձի գործողությունների բնույթը:

Ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության հետ միաժամանակ կարևոր է քննարկել նաև իրավունքի ինքնապաշտպանությունը որպես վնասի հատուցումից ազատող կամ վնասի հատուցումը սահմանափակող հանգամանք: ՀՀ քաղ. օր.-ի 14 հոդվածը սահմանում է նաև, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ի թիվս այլոց, իրականացվում է իրավունքի ինքնապաշտպանությամբ¹⁹: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, իրավունքի ինքնապաշտպանությունը անձի ինքնուրույն գործողություններն է, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքների խախտումը բացառելուն և խախտման հետևանքները նվազեցնելուն²⁰: Կարևոր է ամրագրել, որ իրավունքի ինքնապաշտպանությամբ պատճառված վնասի դեպքում, որը որոշ դեպքերում կարող է և չունենալ անհրաժեշտ պաշտպանության հատկանիշներ, վնաս պատճառողը ևս պետք է հնարավորություն ունենա ազատվելու պատճառված վնասի հատուցումից: Իհարկե այս դեպքում կարևորվում է դատարանների դերը, որոնք պետք է ճիշտ գնահատեն վնաս պատճառողի գործողությունները և պարզեն, թե արդյոք վնաս պատճառողը գործել է քաղաքացիական իրավունքների խախտմանն ուղղված գործողությանը համարժեք, թե ոչ:

¹⁸ Տե՛ս **Майданик Л. А., Сергеева Н. Ю.**, նշվ. աշխ., էջ 86:

¹⁹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 14, կետ 8:

²⁰ Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D0%BC%D0%BE%D0%B7%D0%B0%D1%89%D0%B8%D1%82%D0%B0_%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0, http://kruglaw.narod.ru/lit/civil_law/suhanov1/3_12_2.htm

Բանալի բառեր – վնաս, հակաիրավական արարք, պատճառված վնասի հատուցում, ծայրահեղ անհրաժեշտություն, անհրաժեշտ պաշտպանություն, իրավունքների ինքնապաշտպանություն

ГРИГОР БЕКМЕЗЯН – *Противоправное деяние как условие возникновения внедоговорных отношений.* – В статье обсуждается понятие противоправного деяния, его особенности и применение. Особое внимание уделено действию и бездействию как видам противоправного деяния. Кроме того, подняты вопросы ответственности различных его субъектов – сотрудников полиции, медицинских учреждений, спасателей и т.д.

Проанализировано гражданско-правовое регулирование противоправного деяния, затронут вопрос о том, что ГК РА, регулируя возмещение причинённого вреда, по большому счёту умалчивает о противоправном деянии. В этой связи предложено соответствующее изменение статьи 1058 ГК РА. Речь идёт также о возмещении вреда, причинённого в условиях крайней необходимости, необходимой обороны и самообороны прав.

Ключевые слова: *вред, противоправное деяние, возмещение вреда, крайняя необходимость, необходимая оборона и самооборона*

GRIGOR BEKMEZYAN – *Wrongful Act as a Condition for Occurrence of Delictual Obligations.* – In the article the author discusses the concept, characteristics and problems of application of the wrongful act, as one of the conditions for delictual obligations.

The paper focuses on the "action" and "inaction" as a way of expression types of wrongful act, the author discusses the responsibilities of the various subjects such as - the police, medical institutions, rescue services, etc.

In the article the author attempts to analyze civil regulation of unlawful act, pays attention to the fact that the Civil Code of the Republic of Armenia, regulating compensation for the damage caused, says nothing about the illegal act, leaving the question to practice. In this respect, autor proposes modifications to Article 1058 of the Civil Code of RA.

Compensation for damage caused by state of extreme necessity, necessary defense and self-protection of a right are also discussed in the presented article.

Key words: *harm, wrongful act, compensation for damage, state of extreme necessity, necessary defense and self-protection of a right*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
АРТУР ВАГАРИЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
ARTHUR VAGHARSHYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
2. **ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկավար
ГАГИК КАЗИНЯН – доктор юридических наук, профессор, академик НАН РА, декан юридического факультета ЕГУ
GAGIK GHAZINYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of RA NAS, dean of YSU faculty of Law
3. **ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻԿՍԵՏՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ
АРМИНЕ МЕЛИКСЕТЯН – кандидат юридических наук, подполковник полиции, доцент кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса полиции РА
ARMINE MELIKSETYAN – PhD in Legal Sciences, Police lieutenant colonel, Associate Professor at the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police
4. **ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ
САМВЕЛ ДИЛБАНДЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ
SAMVEL DILBANDYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
5. **ՆԵԼԼԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ** – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ
НЕЛЛИ АГАБАБЯН – аспирантка кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
NELLY AGHABABYAN – PhD student of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
6. **ՎԱՆԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ
ВАНЕ ЕНГИБАРЯН – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
VANE YENGIBARYAN - PhD in Legal Sciences, Associate Professor at the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU

7. **ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ
АРСЕН МАРТИРОСЯН – кандидат юридических наук, доцент, старший прокурор Прокуратуры города Ереван
ARSEN MARTIROSYAN – PhD in Legal Sciences, Associate Professor, Chief prosecutor in the Prosecutor’s office of Yerevan, CLS, docent
8. **ԳՐԻԳՈՐ ԲԵԿՄԵԶՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ
ГРИГОР БЕКМЕЗЯН – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ
GRIGOR BEKMEZYAN - PhD in Legal Sciences, Associate Professor at the Chair of Civil Law, YSU

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՆԴԵՍԻ 2015 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

<i>Աղաքաբյան Նելլի</i> – Պաշտպանի մասնակցությունն անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին.....	2.40
<i>Առաքելյան Սերգեյ</i> – Հայաստանի Հանրապետությունում սպանություն կատարողի կրիմինալոգիական բնութագիրը (ռուս.)	2.17
<i>Առաքելյան Սերգեյ, Խաչիկյան Տիգրան</i> – ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված հանցակազմի կատարելագորման հիմնական ուղղությունները.....	1.35
<i>Ավետիսյան Վահրամ</i> – Շահույթի բաշխմանը մասնակցության և կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու կորպորացիայի մասնակցի իրավունքները.....	1.70
<i>Բերմեզյան Գրիգոր</i> – Հակաիրավական արարքը որպես արտապայմանագրային պարտավորությունների առաջացման պայման.....	3.60
<i>Դիրանդյան Սամվել</i> – Մի քանի նկատառումներ նախաքննության ժամկետների երկարացման իրավական կարգավորման վերաբերյալ.....	2.35
<i>Դիրանդյան Սամվել, Աղաքաբյան Նելլի</i> – Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման որոշ հարցեր.....	3.31
<i>Ենգիբարյան Վահե</i> – Զանգվածային անկարգությունների քննության կրիմինալիստիկական հայեցակարգի օբյեկտը և առարկան (ռուս.)	1.26
<i>Ենգիբարյան Վահե</i> – Զանգվածային անկարգությունների քննության տեսական և գործնական մոտեցումների կայացումն ու զարգացումը (ռուս.).....	3.43
<i>Հայկյանց Արմեն</i> – Հայաստանի Հանրապետության կոլիզիոն իրավունքի կատարելագործման առանձին հարցեր (համեմատական գուգահեռներ Հոռո 1-ի ստանդարտների հետ).....	2.55
<i>Ղազինյան Գագիկ</i> – Հակակոռուպցիոն կրթության տարրերի ներմուծման անհրաժեշտությունը կրթական չափորոշիչներում (ռուս.).....	3.16
<i>Ղազինյան Գագիկ, Հովհաննիսյան Արմեն</i> – Նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և դրա իրավական հետևանքները.....	1.13

<i>Մարկոսյան Միսակ</i> – Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու որակման որոշ հարցեր.....	1.52
<i>Մարկոսյան Միսակ</i> – Քրեական պատասխանատվությունը ցուցմունք տալուց հրաժարվելու համար	2.24
<i>Մարտիրոսյան Արսեն</i> – Վկայի փաստաբանի կարգավիճակը ՀՀ քրեական դատավարությունում.....	3.50
<i>Մելիքսեթյան Արմինե</i> – Վտանգի մեջ թողնելու քրեաիրավական բնութագիրը և որակման առանձնահատկությունները.....	1.62
<i>Մելիքսեթյան Արմինե</i> – Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունը որպես կիրեռհանցագործության դրսևորում.....	3.21
<i>Շաթիրյան Էդգար</i> – Նախընտրական քարոզչության և քաղաքական ընթացիկ գործունեության սահմանազատման հարցի շուրջ	2.64
<i>Միմոնյան Տիգրան</i> – Երիտասարդների ռեցիդիվային հանցավորության միտումները և կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում (ռուս.)	1.46
<i>Վաղարշյան Արթուր</i> – Սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի ձևավորման և զարգացման օրինաչափությունները Հին Հայաստանում (մ. թ. ա. III-II հազարամյակ).....	1.3
<i>Վաղարշյան Արթուր</i> – Արարատյան թագավորության իրավական քաղաքականության և իրավունքի աղբյուրների հարցի շուրջ.....	2.3
<i>Վաղարշյան Արթուր</i> – Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ.....	3.3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
THEORY AND HISTORY OF STATE AND LAW**

- Արթուր Վաղարշյան* – Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ. 3
- Артур Вагаршян* – Декларация независимости Армении и законодательная реализация стратегий демократического, правового общества в 1990-1991 гг.
- Arthur Vagharshyan* – The Declaration of Independence of Armenia and the Legislative Realization of the Strategy of a Democratic, Legal Society in 1990-1991-ies

**ՎՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ
КРИМИНОЛОГИЯ
CRIMINOLOGY**

- Գագիկ Ղազինյան* – Հակակոռուպցիոն կրթության տարրերի ներմուծման անհրաժեշտությունը կրթական չափորոշիչներում (ռուս.) 16
- Гагик Казинян* – Необходимость внедрения в образовательные стандарты элементов антикоррупционного образования
- Gagik Ghazinyan* – The Necessity of Introduction of the Anticorruption Education Elements into the Educational Standards (rus.)

**ՔՐԵԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
УГОЛОВНОЕ ПРАВО
CRIMINAL LAW**

- Արմինե Մելիքսեթյան* – Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունը որպես կիրեռհանցագործության դրսևորում 21
- Армине Меликсетян* – Хищение с использованием компьютерной техники как способ проявления киберпреступности
- Armine Meliksetyan* – Plunder Committed through Computer Technology as a Type of Cybercrime

**ՔՐԵԱՎԱՆ ԴՍՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА
CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS**

- Սամվել Դիլբանդյան, Նելլի Աղաբաբյան* – Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման որոշ հարցեր 31
- Самвел Дилбандян, Нелли Агабабян* – Некоторые вопросы прекращения производства по делам о преступлениях, совершенных несовершеннолетним, и прекращения уголовного преследования
- Samvel Dilbandyan, Nelly Aghababyan* – Some Issues on Termination of Criminal Proceedings and Criminal Prosecution with Regard to Minors

Վահե Ենգիբարյան – Չանգվածային անկարգությունների քննության տեսական և գործնական մոտեցումների կայացումն ու զարգացումը (ռուս.)...	43
Vage Engibaryan – Становление и развитие теоретических и практических подходов к расследованию массовых беспорядков	
Vahe Yengibaryan – Formation and Development of Theoretical and Practical Approaches on Investigation of Mass Disorders (rus.)	

Արսեն Մարտիրոսյան – Վկայի փաստաբանի կարգավիճակը ՀՀ քրեական դատավարությունում	50
Арсен Мартиросян – Статус адвоката свидетеля в уголовном процессе РА	
Arsen Martirosyan – Features of the Status of the Witness Advocate in the Criminal Proceedings in the RA	

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW

Գրիգոր Բեքմեջյան – Հակաիրավական արարքը որպես արտապայմանագրային պարտավորությունների առաջացման պայման	60
Григор Бекмежян – Противоправное деяние как условие возникновения вне-договорных отношений	
Grigor Bekmezian – Wrongful Act as a Condition for Occurrence of Delictual Obligations	

Տեղեկություններ հեղինակների մասին.....	74
Сведения об авторах	
Information about the Authors	

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսի 2015 թ. բովանդակությունը	76
Содержание журнала "Вестник Ереванского университета: Правоведение" за 2015 г.	
The annual contents of the "Bulletin of Yerevan University: Jurisprudence" in 2015	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в
1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of
"Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 26. 11. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: